



ՀՈԿՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԷԹԻԿԱ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական էթիկան գործարարության
շարունակականության և արդյունավետության
գրավականն է

ՀՈԿՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԷԹԻԿԱ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Քրիստոնեական էթիկան գործարարության
շարունակականության և արդյունավետության
գրավականն է**

Բիզնես կրթական, խորհրդատվական կենտրոն

Երևան 2013

Տպագրվել է «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի աջակցությամբ

Խմբագիր՝ Վահագն ԱՍԱՏՐՅԱՆ

Ph.D., MBA , դոցենտ,

Բիզնեսի բաժին,

Սբ. Փրկիչ համալսարան, Կանադա

Մանուկյան Հովհ., Պետրոսյան Կ.,

Քրիստոնեական էթիկա և գործարարություն: Եր.:

2013թ., 56 էջ:

Ձեռնարկում ներկայացված և համադրված են արևելյան և արևմտյան քրիստոնեական էթիկայի հիմունքները գործարար հարաբերություններում, ինչպես նաև քրիստոնեական արժեհամակարգով առաջնորդվող գործարարության դերն ու նշանակությունը մարդու կյանքում:

ISBN 978-9939-0-0942

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին Ա՝ քրիստոնեություն և տնտեսագիտություն

- Ծննդոց գրքի (Գլուխ1-5) տնտեսագիտական դրույթներ

Բաժին Բ՝ քրիստոնեություն և գործարար էթիկա

- Հոգևոր նորմերի կիրառումը գործարար կյանքում
- Գործարար արժեքներ
- Սոցիալ-բարոյական պատասխանատվություն
- Գործարարի հարաբերությունը պետության և հասարակության հետ
- Սուրբգրային համարներ, որոնք առնչվում են ձեռնարկատիրությանը

Ծննդոց գրքի (Գլուխ1-5) տնտեսագիտական դրույթներ

Ժամանակակից աշխարհի գրեթե բոլոր երկրները մշտապես առնչվում են այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են աղքատությունը, հասարակության բևեռացվածությունը, տնտեսական ճգնաժամերը, տնտեսական և քաղաքական էքսպանսիաները, գործազրկությունը և նմանատիպ բազում այլ բացասական երևույթները: Տնտեսագիտական դպրոցների և տնտեսագետների կողմից մշտապես փորձ է արվում տարբեր տեսությունների միջոցով գտնել վերը նշված խնդիրների լուծումները, որոնք երբեմն լրացնում են միմյանց, իսկ երբեմն էլ հակասում: Մեր կողմից փորձ է արվելու տնտեսագիտական հիմնարար օրենքների և օրինաչափությունների վերաբերյալ դրույթների սկզբնաղբյուրը փնտրել Աստվածաշնչում, ի մասնավորի «Ծննդոց» գրքում, որ ներկայացնում է Աստծո կողմից մարդու արարչագործությունը, և որտեղ, մեր կարծիքով, սահմանվում են այն հիմնական օրենքներն ու օրինաչափությունները, որոնք վերաբերում են մարդու, ընտանիքի և ընդհանրապես հասարակության հավասարակշռված հարաբերություններին, այդ թվում՝ տնտեսական: Այս ամենն ուսումնասիրելու համար նախ և առաջ անհրաժեշտություն է առաջանում սահմանել «տնտեսություն» կամ «տնտեսագիտություն» հասկացողությունը: «Էկոնոմիկա» բառը ունի հին հունական ծագում, որը կազմված է οἶκος- տուն և νόμος – կանոն, օրենք բառերից, որը բառացիորեն թարգմանվում է «տնտեսության վարման կանոններ»: Հայկական լեզվամտածողության մեջ ևս տնտեսություն բառը գրեթե նույն իմաստն ունի, որը կազմված է տուն և տեսնել արմատներից, այսինքն տան կարիքները տեսնել: Ավելի լայն իմաստով սա կարելի է մենաբանել որպես տան կարիքները, պետքերը տեսնելու կամ բավարարելու գործունեություն, որի ընթացքում առաջանում են որոշակի հարաբերություններ: Դիտարկելով երկրի տնտեսության մակարդակով կարելի է նշել, որ տնտեսությունը մարդու /ֆիզիկական անձ/, կազմակերպությունների /իրավաբանական անձ/ և պետության հարաբերությունների անբողջություն է, որը միտված է այս երեք սուբյեկտների կարիքների բավարարմանը: Հարկ է նշել որ, բոլոր կողմերի կարիքների բավարարարումը վերջին հաշվով պետք է միտված լինի անձի կարիքների

բավարարմանը: Առաջին անգամ գիտական իմաստով «տնտեսագիտություն» բառը գործածվում է մ.թ.ա. IV դարում Քսենոֆոնի կողմից, որն այն անվանում է որպես բնական գիտություն, Արիստոտելը գտնում էր, որ տնտեսությունը մարդու բնական պահանջմունքների համար անհրաժեշտ բարիքների ստեղծման նպատակաուղղված գործունեություն է. ավելին՝ Արիստոտելը տնտեսության դերը տեսնում էր անհետաձգելի պահանջմունքների /կարիք/ բավարարման և տնտեսության պահպանման համար միջոցների ստեղծման մեջ: Սրան Արիստոտելը հակադրում էր Քրեմատիստիկա հասկացությունը, որը հունարեն *χρηματιστική* հարստացում բառից է: Ըստ Արիստոտելի՝ սա գիտություն է հարստացման մասին, կամ փողի և հարստության կուտակման արվեստ, և այն դիտվում է որպես բուն նպատակ, գերխնդիր¹: Այսինքն եթե տնտեսագիտությունը միտված է մարդու բնական կարիքների /պահանջմունքների/ բավարարմանը, ապա Քրեմատիստիկան բացառապես քննարկում է հարստացման և շահույթի ստացման հետ կապված հարցեր, շահույթը դիտելով որպես գերակա նպատակ: Նշենք նաև, որ տնտեսագիտության մեջ փողը հանդես է գալիս որպես ապրանքների փոխանակմանը նպաստող միջոց, մինչդեռ քրեմատիստիկայի մեջ փողը հանդես է գալիս որպես հարստության կուտակման միջոց և կորցնում է իր փոխանակման միջոցի հատկությունը:

Վերը նշվածից կարելի է ենթադրել, որ գոյություն ունի տնտեսության վարման երկու հիմնական մոտեցում, որից մեկը միտված է մարդու կարիքների ու պահանջմունքների բավարարմանը, իսկ մյուսը՝ որոշ մարդկանց կամ մարդկանց խմբերի հարստության կուտակմանը:

Կարծում ենք տնտեսագիտության գործառույթը կայանում է նրանում, որ ստեղծվեն այնպիսի բարիքներ, որոնք անհրաժեշտ են մարդկանց այնպիսի պահանջմունքների բավարարմանը, առանց որի մարդը և հասարակությունը չեն կարողանա բնականոն զարգանալ: Որոշ հեղինակներ տնտեսագիտությունը ներկայացնում են որպես մարդու, հասարակության անսահմանափակ պահանջմունքների բավարարում սահմանափակ ռեսուրսներով²:

¹ Аристотель. Политика // Сочинения в 4-х томах. М., Мысль, 1983. Т.4. Перевод С. А. Жебелева

² Стенли Фишер, Рудигер Дорнбуш, Ричард Шмалензи. Экономика.

Москва:Дело, 1998 г. ст. 1

Մարդու պահանջմունքները բավարարվում են որոշակի բարիքներով: Շատ հեղինակներ բարիքի սահմանման ժամանակ կիրառում են տարբեր հասկացողություններ:

Լայն իմաստով՝ այն ամենը, ինչ օգտակար է մարդու համար և ծառայում է նրա պահանջմունքների բավարարմանը, հանդիսանում է բարիք:³

Ըստ մարքսիստական մոտեցման՝ նյութական բարիքները ապահովում են մարդու հիմնական նյութական պահանջմունքների բավարարումը (սնվել, կացարան, և այլն):

Ալֆրեդ Մարշալը բարիք ասելով հասկանում էր բոլոր առարկաները, որոնք բավարարում են մեր պահանջմունքները:

Բարիքը շատ մանրամասն և առանձնահատուկ կերպով ներկայացվում է Աստվածաշնչում, երբ վեց օրերին Աստված, ստեղծելով այս կամ այն բանը, ասաց բարի է (ի դեպ, «բարիք» բառը «բարի» արմատից է):

Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը... : Աստված տեսավ, որ լույսը բարի է, ... (Ծն 1:1-5)⁴: Աստուած ստեղծեց տարածությունը, ... Աստված տարածությունը կոչեց երկինք: Աստված տեսավ, որ բարի է ... (Ծն 1:7,8): Աստված ցամաքը կոչեց երկիր, իսկ հավաքված ջրերը կոչեց ծով: Աստված տեսավ, որ բարի է (Ծն 1:10) ... հողը ամբողջ երկրի վրայ ցանվելու սերմը իր մեջ պարունակող դալար բույս և իր տեսակի սերմը իր մեջ պարունակող, միրգ տվող ծառ աճեցրեց: Աստված տեսավ, որ բարի է (Ծն 1:12): Ուշագրավ է այն հանգամանքը, որ երրորդ օրը Աստված երկու բարիք տվեց՝ ցամաքը և ծովը, միաժամանակ միրգ տվող ծառեր: Այստեղ հստակ ընդգծվում է տնտեսագիտությունում հայտնի հանրային և անհատական բարիքի հասկացությունը, մինչ երրորդ օրը Աստված մարդուն տվեց հանրային բարիքներ՝ լույս, երկինք կամ օդ, և միաժամանակ երկիր և ծով իր ամբողջ բնական հարստություններով, մինչդեռ այստեղ խոսվում է նաև անհատական բարիքի մասին՝ մրգատու ծառերի:

Աստված ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի տարածութեան մեջ, որպեսզի լուսավորեն երկիրը և իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն, որպեսզի ցույց տան տարվա եղանակները, տոնական օրերն ու տարիները»(Ծն 1:14):

Հաջորդ բարիքը, որ հատուկ ընդգծվում է, դա ժամանակն է, այստեղ հստակ ցույց է

³ Е. Е. Румянцева, Новая экономическая энциклопедия, Москва, ИНФРА-М, 2006, ст 51

⁴ Աստվածաշունչ մատենան հին և նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2003թ. էջ. 5

տրվում մարդու ժամանակի սահմանափակությունը և օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում մարդու կողմից ժամանակի ռացիոնալ օգտագործման խնդիրը: Սա, կարծում ենք, տնտեսագիտության ամենակարևոր խնդիրներից մեկն է: Շուկայավարման իմաստով հետաքրքիր է տոն օրերի նշումը, որը շատ երկրներում դարձել է առևտրի խթանման լավագույն միջոցներից:

Այնուհետև ստեղծվեցին թռչուններն ու կենդանիները և վերջապես Աստուած ասաց. **Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ ... , Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց(Ծն 1:25-27):** Այստեղ Աստծո պատկեր ասելով հասկանում ենք մարդուն տրված մի շարք բարիքների անբողջություն: Նախ և առաջ անմահություն, ազատություն, ինքնիշխան կամք, արարչագործ և հոգևոր բնույթ և բազմաթիվ այլ հատկանիշներ: Սա ենթադրում է, որ նյութական բարիքներից զատ Աստված մարդուն օժտեց մտածելու հատկությամբ, միաժամանակ տալով ոչ նյութական բարիքների անբողջություն: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տնտեսագիտությունը հիմնականում անդրադառնում է մարդու նյութական և ոչ նյութական ոչ հոգևոր կարիքների բավարարման խնդրին, մինչդեռ, եթե մարդն ունի նաև հոգևոր կարիք, ապա դրանց բավարարում պետք է դիտարկվի միաժամանակ, և պետք է տնտեսագետների կողմից փորձ արվի պարզելու դրանց օպտիմալ հարաբերակցությունը, մանավանդ, որ շատերի կողմից հավիտենական կյանքը կամ անմահությունը դիտվում է որպես բարիք:

Ինչպես արդեն նշվեց, շատ տնտեսագետներ բարիքը դիտում են ածանցյալ պահանջմունքների, մինչդեռ, կարծում ենք, որ բարիքի առկայությամբ է պայմանավորված մարդու պահանջմունքը, սա է պատճառը, որ այս կամ այն բարիքի բացակայության պարագայում մարդն անմիջապես ուզում է դա փոխարինել այլ բարիքով: Հատկանշական է, որ շատ հեղինակներ՝ Վ.Տելլի, Ա.Մասլոու, Գերցբերգը, Մակ-Կլիվանդը որպես նախապայման ընդունում են, որ մարդը պահանջմունք է զգում ինչ-որ բանի անբավարարության պարագայում, լինի ֆիզիոլոգիական, թե՛ հոգեբանական: Կարծում ենք, որ այդ «ինչ որ բանը» հենց Աստվածաշնչով սահմանած բարիքների անբողջությունն է:

Աստված օրհնեց նրանց ու ասաց. Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ... (Ծն 1:28): Ելնելով Աստվածաշնչում ներկայացվող բարիքներից

հստակ ընդգծվում է մարդու պահանջմունքների շղթան, որը առանձին ուսումնասիրության կարիք ունի: Հատկապես որ այս ամենի արդյունքում **Աստված տեսավ որ ինչ ստեղծել է բարի է... ...և յոթերորդ օրը հանգստացավ(Ծն 1:28):** Այստեղից կարելի է ենթադրել, որ մարդու կյանքում հիմնական բարիքը հանգիստն է՝ հոգևոր և մարմնական և դրանով է պայամանավորված մնացած բոլոր բարիքների օգտակարությունը:

Տէր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկութեան դրախտում, որպէսզի սա մշակի ու պահպանի այն (Ծն 2:15):

Աստված մարդու համար ստեղծելով դրախտը ի սկզբանե մարդու համար սահմանեց ամենապարզ տնտեսական գործունեությունը՝ այգու մշակում և պահպանում, այսինքն մարդու համար բարիքները մշտապես հասանելի էին և նրան միայն մնում էր դրանք պահպանել: Սակայն հետագայում Ադամի անհնազանդության պատճառով տեսնում ենք, որ, **Աստուած Ադամին ասաց. թող անիծեալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կեանքի բոլոր օրերին (Ծն 3:17):**

Կարծում ենք, սնունդ հայթայթել ասելով պետք է հասկանալ աշխատանքի արդյունքում ստեղծված բարիքների ամբողջությունը, որը մարդուն իր կյանքի բոլոր օրերին տրվում է դժվարությամբ, սա նշանակում է, որ սահմանային աշխատանքը մարդու համար չարչարանք է, որը միտված է մարդու սահմանային պահանջմունքների բավարարմանը: Եթե աշխատանքը փոխարինենք աշխատաժամանակով, իսկ պահանջմունքները աշխատավարձով, կստանանք տնտեսագիտության մեջ հայտնի աշխատուժի անհատական առաջարկի կորը: Մարդու համար շարունակական աճող պահանջմունքները՝ բարձր աշխատավարձի անհրաժեշտությունը, սովորաբար բերում են շարունակական տանջանքի՝ աշխատաժամանակի ավելացման, և քանի որ, ինչպես արդեն նշել ենք, մարդու համար ամենաառաջնային բարիքը հանգիստն է, մարդը հանգստի բարիքը փոխարինում է այլ բարիքների հետ և նա դառնում է անտարբեր այդ բարիքների աճի նկատմամբ, որի արդյունքում ինչքան էլ ավելացող լինեն մյուս պահանջմունքները՝ մարդը սկսում է դրանցից հրաժարվել՝ ի հաշիվ ավելի մեծ բարիքի՝ հանգստի, որի արդյունքում կրճատվում է իր տանջանքը՝ աշխատաժամանակը որի արդյունքում կորը թեքվում է ներքև: Կարծում ենք այս

հանգամանքով է պայմանավորված, որ մարդիկ ձգտումը են առանց դժվարության բարիքներ ձեռք բերել, երբեմն նույնիսկ անօրինական ճանապարհով: Հեշտ բարիքների ձեռքբերմամբ է պայմանավորված նաև կենսաթոշակային համակարգի գոյությունը, որի միջոցով մարդիկ փորձում են մեղմել ծերության հասակում «դժվարությամբ վաստակվող հացի» խնդիրը:

Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, և դու դաշտային բույսերով սնվես: Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալը, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս(Ծն 3:18,19):

Փուշ և տատասկը ցույց է տալիս երկրի կողմից մարդուն կամ ընդհանրապես հասարակությանը տրվող բարիքների քանակը, որ կարելի է ընդունել որպես սահմանափակ ռեսուրսների առկայություն: Եթե մինչ մեղքը մարդու համար հաց հանդիսանում էր առանց հոգսի տրված միրգը, ապա հիմա մարդը ստիպված էր սնվել դաշտային բույսերով, որն ինքն էր պարտավոր ստեղծել: Կարծում ենք, այստեղ տեղի ունեցավ բարիքի փոփոխություն՝ Աստվածատուր կամ բնատուր բարիքից, որն անվճար էր և առանց տանջանքի էր տրվում, անցում կատարվեց տանջանքով կամ քրտինքով տրվող բարիքի. այս պարագայում բարիքը ստացվում է մարդու աշխատանքի՝ քրտինքի արդյունքում: Հատկանշական է, որ այս գաղափարը ընկած է Կ. Մարքսի արժեքի աշխատանքային տեսության հիմքում: Այսուհանդերձ հստակ երևում է, որ մարդու ձեռքով ստեղծված բարիքները չի երաշխավորում նրան հավիտենական կյանք, և հետևաբար ժամանակը մարդու համար դառնում է ամենասուղ ռեսուրսը, որն անպայման պետք է ունենա արժեք և որի անարդյունավետ օգտագործումը մինչև օրս էլ հանդիսանում է անձի և տնտեսագիտության կարևորագույն խնդիրներից մեկը:

Հատկանշական է, որ մարդու կողմից կատարվող աշխատանքն անմիջապես բերեց աշխատանքի բաժանման՝

Աբելը դարձավ ոչխարների հովիվ, իսկ Կայենը հող էր մշակում(Ծն 4:2): Կարելի է ասել, որ հողի մշակումը ֆիզիկական աշխատուժ պահանջող աշխատանք էր, մինչդեռ ոչխարների բուծելը ըստ էության դիտվում է որպես կազմակերպչական գործընթաց: Լայն իմաստով Կայենի գործը կարելի է դիտել բանվորի աշխատանք, մինչդեռ Աբելինը՝ ձեռնարկատիրական գործունեություն:

Որոշ ժամանակ անց Կայենը երկրի բարիքներից ընծա բերեց Աստծուն, իսկ Աբելը բերեց իր ոչխարների առաջնեկներից ու գերերից: Աստված բարի աչքով նայեց Աբելին ու նրա ընծաներին(Ծն 4:3,4):

Այստեղ բարիքների ընծա բերելը նշանակում է երկու բան. Նախ, որ բացի իրեն անհրաժեշտ բարիքներից նրանք ստացել էին հավելյալ, և երկրորդ, որ բարիքից ուրիշին՝ այս պարագայում Աստծուն բաժին հանելը ևս սահմանվում է որպես բարիք: Հարկ է նշել, որ շատ տնտեսագետներ աշխատանքի արդյունքում ձևավորված հավելյալ բարիքի առկայությունը լուծելու համար այն դիտում են որպես ձեռնարկատիրոջ բաժին կամ եկամուտ, մինչդեռ մարդու պահանջմունքների մեջ բացի նյութական պահանջմունքներից նաև հոգևոր պահանջմունքներ են մտնում, որոնցից մեկը բավարարվում է այնպիսի բարիքով, ինչպիսին ողորմությունն է կամ սեփական ունեցվածքից ուրիշին բաժին հանելու երևույթը: Ուստի և ի սկզբանե Աստծո կողմից մարդուն տրամադրած աշխատանքի դիմաց հատուցումը այնպես է սահմանված, որ յուրաքանչյուր աշխատող ստանա այնքան բարիք, որ մի մասն էլ կարողանա ուրիշին տալ: Կարծում ենք, սա ոչ միայն հանգեցնում է մարդու հոգևոր պահանջմունքի բավարարմանը այլ նաև հասարակության մակարդակով դառնում է եկամուտների հավասարաչափ բաշխման գործիք, որը մասամբ արվում է պետության հարկային համակարգի միջոցով:

Զէ՞ որ եթե արդար ես զոհաբերում, բայց արդար չես բաժանում, մեղանչած ես լինում(Ծն 4:7):

Փաստորեն ստացվում է մի իրավիճակ, երբ Կայենը մեղադրվում է ոչ արդար բաժանման մեջ, կամ որ նույնն է՝ ունեցվածքի պահպանում և կուտակում որպես նպատակ, որն, ինչպես արդեն նշել ենք, Քրեմատիստիկան է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հարստության կուտակումը որպես նպատակ դիտող մարդիկ ըստ էության իրենց զրկում են որոշակի բարիքներից: Կարծում ենք, շատ արդյունավետ կլինի գտնել միավոր կուտակված հարստության հետևանքով մարդու որոշակի բարիքներից հրաժարվելու չափը: Կամ երևի թե ճիշտ կլինի ասել հարստության կուտակման սահմանային հակումը:

Դու պիտի մշակես հողը, բայց նա պիտի չկարողանայ քեզ տալ իր արդյունքը □ Ահ ու դողի և երերման մէջ պիտի լինես երկրի վրա (Ծն 4:12):

Ի տարբերություն Ադամի, որին երաշխավորվեց քրտինքով հացի վաստակումը, Կայենին արդյունք չխոստացվեց, ավելին նրա համար սահմանվեց երկրի վրա լինելու կամ գործելու մեծ ռիսկ: Այդ ինչ գործունեություն էր սահմանված Կայենի համար, որ ուներ ռիսկի մեծ աստիճան, և պետք է լիներ «տատանվող», որի արդյունքը չէր երաշխավորվում: Առաջին հայացքից Աստվածաշունչը այդ մասին ոչինչ չի խոսում, սակայն Աստվածաշնչագետները և աստվածաբանները գիտեն, որ Աստված շնչում կիրառվող անունները հստակ ունեն իրենց թարգմանությունը և իմաստը: Այս սկզբունքով առաջնորդվելով, մեր կողմից փորձ արվեց ուսումնասիրել Կայենի սերնդի անձնանունները. Կայեն (ստեղծել, ձեռք բերել)⁵ կարծում ենք սա այն հարստությունն էր, որի մասին խոսեցինք, նրա որդին՝ Ենոքը (նորացնող, բացահատող) քաղաքային կյանքի նորարար, Գայերիդադ (վայրի ավանակ) սա ակնարկ է մարդու բնագոյային կամ կենդանական ցանկությունների վերաբերյալ, Մայիել (Աստծո կողմից ջնջված), Մաթուսաղա (մահ խնդրող, մահ ստեղծող), Ղամեք (ուժեղ, զորավոր): Ղամեքի երկու կանայք են Սելլան (թաքնվել ստվեր) և Ադդան (տոնական): Սելլան ծնեց Թոբելին (կրկնօրինակ անող, զինագործ) և նրա քրոջը Նոեմաին (հաճույք, գեղեցիկ): Ադդան ծնեց Հոբելին (հոսք, բազմարկում) խաշնարածներ վրաններում բնակվողների հայր և Հոբաղ (ծգտում), ով հորինեց երգն ու քնարը: Այստեղից շատ հեշտ է կռահել, որ հիմք դրվեց «մահ» բերող մասնագիտությունների, ինչպիսիք են ստվերային գործնեությամբ պայմանավորված զենքի արտադրությունը, կրկնօրինակումները և մարմնավաճառությունը, իսկ մյուս կողմից տոնական, հանդիսավոր բնույթ կրող երգ երաժշտությունը /շոու բիզնես/ և խաշնարածների վրանների մեջ բնակվողները որոնք համարվում էին ամենահարուստները և որոնք վաշխով փող էին տալիս: Հատկանշական է Հոբաղ բառի թարգմանությունը՝ հոսք և բազմարկում, իսկ փողի բազմարկումը և դրամական հոսքերի շարժը այսօր հիմնականում տեղի է ունենում բանկերի միջոցով: Շատ տնտեսագետներ մինչ օրս քննարկում են այս կամ այն ապրանքի բարիք լինելու հանգամանքը և հատկապես բարիքի սահմանման մեջ նշում են հասարակությանը անհրաժեշտ ապրանքների մասին, մինչդեռ կարծում ենք, որ վերը նշված ապրանքները չեն հանդիսանում բարիքներ, բայց մարդուց խլում են իր աշխատավարձի՝ աշխատանքի մեծ մասը՝ չբավարարելով մարդու իրական

⁵ Ринкер Ф., Майер Г. Библейская Энциклопедия Брокгауза Перевод с немецкого. Оригинальное издание: Lexikon zur Bibel © 1994 Brokhaus Verlag Wuppertal

Բոլոր անձնանունների թարգմանությունները վերցված են սույն բառարանից

պահանջները: Կարծում ենք, որ մարդու կողմից աշխատանքով ստեղծված արժեքի մեծ մասը ծախսվում է ոչ իրական` «կեղծ» բարիքի վրա և մարդու մոտ առաջանում է խզում անհրաժեշտ և ձեռք բերված բարիքների մեջ, որն էլ տնտեսագիտության մեջ երբեմն անվանում ենք անսահմանափակ պահանջները: Մինչդեռ կարծում ենք, մարդու պահանջները անսահմանափակ չեն և դրանք ուղղակի պայմանավորված են մարդու համար անհրաժեշտ բարիքների քանակությամբ, որը, ինչպես տեսանք, մարդը կարող է ձեռք բերել իր աշխատանքով:

Անփոփելիով ուզում ենք նշել, որ մեր կողմից փորձ է արվել Աստվածաշնչի «Ծննդոց գրքի» 1-4 գլուխները մեկնաբանել տնտեսագիտության տեսանկյունից և պարզել դրանց տնտեսական էությունն ու բովանդակությունը: Այնուամենայնիվ, առաջ քաշված թեզիսները և տեսակետները մանրամասն ուսումնասիրության և հիմնավորման կարիք ունեն:

Բաժին Բ. քրիստոնեություն և գործարար էթիկա

Ժամանակակից աշխարհի մարտահրավերները, որոնք ավելի ու ավելի են նյութականացնում կեցության ուղին, կրոնական և բարոյական տեսակետները համարում պարզապես կյանքի մասնավոր մի հատված, որտեղ քրիստոնեական բարոյագիտության նորմերը մղվում են կիրառության միայն մասնավոր պայմաններում՝ եկեղեցում, հոգևոր միջոցառումների ժամանակ և այլն, հրամայական է դառնում ևս մեկ անգամ անդրադառնալ որոշ բնագավառների, որտեղ նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրականություն չդնելու համար շատ հաճախ անարդարությունը, խարդախությունը, ագահությունը արդարացի որակելու համար նշվում է, թե քաղաքականությունը կամ գործարարությունը անհամատեղելի են բարոյականության հետ: Սակայն դեռևս Քրիստոսից առաջ 4-րդ դարում մեծագույն փիլիսոփա Արիստոտելը նշում է, որ կատարելապես անհնար է գործել հասարակական կյանքում՝ չլինելով որոշակի բարոյական հատկությունների կրող արժանի մարդ: Լինել արժանի մարդ, նշանակում է օժտված լինել բարոյական առաքինություններով: Իսկ այն մարդը, ով ցանկանում է մասնակից լինել հասարակական-քաղաքական կյանքին, պետք է լինի առաքինի վարքի տեր մարդ:

21-րդ դարում տեղեկատվական դաշտի և գիտատեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց գործարար հարաբերությունների հստակեցումը դառնում է ձեռնարկատիրական գործունեության կայուն երաշխիքը՝ ժամանանակից մրցունակ շուկայում ապահովելու համար իր տեղն ու դիրքը: Այստեղ իրենց նշանակալի կարևորությունն ունեն էթիկայի գրված կամ չգրված կողեքսները, որոնցով առաջնորդվում են գործարարները: Առանց բարոյական արժեքների անհետանում է հասարակության վստահությունը գործարարության և պետականության նկատմամբ: Այդպիսի հետևանքները տնտեսության համար կարող են լինել վախճանարար, հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

Աստվածաշնչում կարդում ենք, որ Արարիչը մարդուն տվեց արարչագործությունը պահպանելու, մշակելու շնորհ «Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղաւորեց բերկրութեան դրախտում, որպէսզի սա մշակի ու պահպանի այն» (Ծն 2:15): Ուստի, բարոյական նորմերին համապատասխան է ամեն աշխատանք, որն ուղղված է մարդու բարօրության և արարչագործության

պահպանմանը և մշակմանը, որն ունի աստվածային կամքի բարեհաճությունը: Ավետարանում հանդիպում ենք, որ Հիսուս Քրիստոս մասնավորաբար իր առակներում անդրադառնում է տարբեր մասնագիտությունների և դրանցից որևէ մեկին առավելություն չի տալիս: Արդ, գործարարությունը, իբրև ընդհանուր աշխատանքի մի բաղկացուցիչ դրսևորում, Աստծո կողմից նույնպես տրված է մարդուն և իր մեջ ամփոփում է քրիստոնեական էթիկայի հիմունքները: Հայ եկեղեցու հոգևոր հայրերը նույնպես անդրադարձել են այս խնդիրներին: Այս առումով հիշատակելի են Սբ. Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը, Սբ. Գրիգոր Տաթևացին և այլք: Նրանք բոլորն էլ շեշտում են առևտրի մեջ արդարության սկզբունքը, պատասխանատվության զգացումը Աստծո առաջ կատարած գործողությունների համար: Առանց բարոյական նորմերի գործարար բանակցությունների մեջ չեն կարող լինել փոխշահավետ շարունակական գործարքներ: Ամերիկացի տնտեսագետ Ջոն Սալիվան նշում է, որ անվստահության գործոնի պատճառով կրճատվում են ներդրումները և կապիտալի արտահոսք է լինում: Վստահությունը խթանում է կազմակերպված շուկաների ստեղծումը, որտեղ արտադրողները ապրանքին հարաբերական կանխատեսելի արժեք են տալիս, իսկ սպառողները որոշում են այդ ապրանքի հարաբերական կանխատեսելի պահանջարկը: Այսպիսի գործընթացի հաստատուն կրկնությունը շուկայական նույնիսկ ամենաբարդ գործառնությունում շատ արդյուավետ է, ինչպես հաստատում է մեկ այլ ամերիկացի տնտեսագետ Թոմ Պալմերը: Մի շարք քրիստոնյա տնտեսագետներ դեմ են այն կարծիքին, թե բիզնեսում կարևորը արդյունքն է, ստացած եկամուտը, և բարոյական նորմատիվները խոչընդոտում են առավելագույն շահույթ ստանալուն: Նրանք նշում են, որ այդպիսի գործարար հարաբերությունները երկարաժամկետ և կայուն կերպով երաշխավորված չեն կարող լինել, քանի որ նախքան եկամուտը, շահույթը, գործարարն առաջին հերթին հարաբերություն ունի Աստծո հետ, ապա նոր մարդու, և ամենավերջում միայն շահույթն է կամ եկամուտը: Մենք ապրում ենք Արարչի ստեղծած աշխարհում, ուր մարդուն հնարավորություն է տրված կառավարելու Աստծո ընձեռած արարչագործությունը, տնտեսությունը, միևնույն ժամանակ գործածարար կարողությունների միջոցով գործակից դառնալու աստվածային տնտեսության զարգացմանը և ծաղկմանը երկրի վրա՝ հիմնված մասնավոր և ընդհանուր սեփականության քրիստոնեական սոցիալական ուսմունքի հիմունքների վրա: Մարդն իր էության մեջ կրում է Արարչի նմանությունն ու պատկերը: Այս հանգամանքը մարդուն ընձեռում է նորը ստեղծելու, արարելու կարողությունը,

ապահովում շարունակական գործընթացը: Այս առավելությունը ձեռնարկատիրությամբ զբաղվող մարդուն դարձնում է մրցունակ և առաջատար շուկայական մրցակցության ասպարեզում՝ զարկ տալով ստեղծագործական, նորարարական մոտեցումների ու մտքերի զարգացմանը: Եթե մարդը խախտում է իր հարաբերությունն Աստծո, այնուհետև մարդկանց հետ՝ գերադասելով առավելագույն շահույթն իբրև առաջնային իրողություն, այս պարագայում նվազում է Աստծո ներկայությունն ու աջակցությունն իր կյանքում, այնուհետև կորցնում է իր վստահությունը մարդկանց հանդեպ: Այդ ամենը հեղինակագրկում է ձեռնարկատիրությունը և նրա տնտեսական աճը: Իսկ անվստահության գործոնը նոր ճանապարհներ է բացում կաշառակերության համար: Թոմ Պալմերը նշում է, որ շուկան պահանջում է հասարակական փոխազդեցության և տնտեսական փոխանակության որոշակի կանոններ: Դեվիդ Հյունը երկու հարյուր հիսուն տարի առաջ ասել է, որ բնության մեջ գործում է ընդամենը երեք օրենք՝ սեփականության իրավունքը, փոխանցման իրավունքը՝ համաձայնության միջոցով և խոստումների իրականացումը: Այս խոսքերը դեռևս անգերազանցելի են համարվում: Այս կանոնները համարվում են բարեկեցության և շուկայի գոյության հիմունքները: Իսկ այս ամենի գրավականը էթիկայի հիմունքների պահպանումն է: Հյունի օրենքները ամրագրված էին դեռևս աստվածաշնչյան պատվիրաններում՝ չգողանալ, չցանկանալ ուրիշի սեփականությունը և չբերել կեղծ վկայություն: «Գողությունը» նվազեցնում է հարստությունը, «ուրիշի սեփականության վրա աչք դնելը» երկրում ստեղծում է քաոսային իրավիճակ հարստության վերաբաշխման հարցում: Կեղծ վկայությունը հուսախաբ է անում հասարակությանը, ներդրողները կորցնում են վստահությունը և երկարաժամկետ բարգավաճումն ուղղակի անհնար է դառնում: Իսկ Սբ. Գրիգոր Տաթևացին ասում է, թե առևտուրը բարի է, եթե այն համարժեք փոխանակություն է: Ուստի, քրիստոնեական աշխարհում առողջ հասարակական փոխազդեցությունը կանոնակարգվում է մարդու քրիստոնեական աշխարհընկալման պատասխանատվությամբ առաջնորդվելու բարոյագիտական հիմունքներով:

Այնուամենայնիվ որոշ տնտեսագետներ էթիկան ու բիզնեսը համարում են տարբեր, չփոխհարաբերվող աշխարհներ: Բայց, ինչպես դիտարկում է Ջոն Սալիվան, ժամանակակից տնտեսական տեսության մեջ ձեռնարկության կայունությունը որոշվում է գործարար հարաբերությունների կարողությամբ միևնույն պատվիրատուների հետ երկարաժամկետ աշխատելիս: Իսկ պատվիրատուին

միանշանակորեն անհրաժեշտ է վստահություն առ այն, որ իր հետ վերաբերվում են ազնիվ և արդարացի: Այս ամենն իր հերթին կախված է այնպիսի իրողություններից, ինչպիսիք են պայմանագրերի հետևողականությունը, օրենքի գերակայությունը, գույքային իրավունքները և գործարար էթիկան: Մի հասարակությունում, որտեղ թույլ է իրավական դաշտը, բարոյական արժեքներն ավելի մեծ դեր են խաղում գործարար հարաբերությունների շարունակականության և, հետևաբար, զարգացման ոլորտում: Միանշանակորեն կարելի է ասել, որ էթիկան, իբրև տեսություն և պրակտիկա, դուրս է գալիս այս կամ այն ձեռնարկության գործունեության սահմաններից: Այն խարսխված է ամենօրյա կյանքի տարբեր ոլորտներում: Քրիստոնեական էթիկան պարզապես մասնագիտություն կամ սոցիալական դիրք չէ, որպեսզի զերծ մնա գործարար հարաբերությունների շրջանակներից: Իսկ գործարարությունն էլ իր հերթին պարզապես շահույթ ստեղծելու ուղի չէ, քանի որ նրա արդյունքներից ստեղծվում են լավ կամ վատ արժեքներ: Քրիստոնեական էթիկան կանխում է այնպիսի գործարարության զարգացումը, որն իրականում վնասում է հասարակությանը և խեղաթյուրում բարոյահոգեբանական արժեքները: Քրիստոնեական արժեքները ֆրանսիացի տնտեսագետ Լեոն Վալրասի ընդհանուր հավասարակշռության տեսության լավագույն ուղին է՝ հիմնված մրցակցության և համագործակցության հավասարակշռող սկզբունքների վրա: Բարոյական եւ էթիկական չափանիշները սահմանում են բարեպաշտության չափանիշներ բիզնեսի բնագավառում: Կորպորատիվ անախորժությունները, խարդախությունը, ազահությունը, անազնվությունը եւ կաշառակերությունը աստիճանաբար նվազում են, եւ էթիկայի կանոնները բացառությունից վերածվում են նորմատիվ գործառույթների:

Հոգևոր տեսանկյունից դիտարկելիս գործարարները չպետք է մոռանան, որ այն, ինչ տրված է այս աշխարհում, ժամանակավոր է տրված, և այն, ինչ մարդը տնօրինում է այս աշխարհում, դրա համար պատասխանատու է լինելու Արարչի առջև: Գործարարի համար կյանքի նպատակ չպետք է դառնա հարստություն կուտակելը, քանի որ Ավետարանն էլ է ասում, «Տեսեք, որ զգույշ լինեք ամեն տեսակ ազահությունից, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ» /Ղուկ. 12.15/: Հարստությունը պետք է դառնա այն միջոցներից մեկը, որով գործարարը պետք է մասնակից դառնա Աստծո ստեղծած արարչագործության ծաղկմանը՝ ի բարօրություն մարդկության և բնության խնամքի: Ի վերջո մարդու երկրային կյանքը կարճ է և Ավետարանում նկարագրվող անմիտ մեծահարուստի

առակը (Ղուկ. 12.16-21) ցույց է տալիս, որ մարդ պետք է ճիշտ գնահատի ունեցվածքի տնօրինումն ու օգտագործումը իր երկրային կյանքում և այն ծառայեցնի ավելի շատ հոգևոր գանձեր ունենալու համար՝ առաջնորդվելով լույսի պտուղներով, որոնց մասին նշում է Սբ. Պողոս առաքյալը. «Քանզի լույսի պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը» (Եփես. 5.9):

Հոգևոր նորմերի կիրառումը գործարար կյանքում

Մարդն, իբրև էակ, հոգեղեն և հողեղեն է: Քրիստոնյա գործարարի համար իր առաքելության մեջ հոգևորը և նյութականը չեն հակասում միմյանց, այլ՝ փոխլրացնում: Հավատքը պարզապես կյանքից կտրված իրողություն չէ՝ որպես մասնավոր մի երևույթ, քանի որ հավատքն արտահայտում է կյանքն իր բազմակողմանիությամբ ապրելու ուղին, որը կարգավորում է մարդու ներաշխարհի ներդաշնակությունը, բացահայտում հավիտենական կյանքի ճանապարհը: Ուստի, հոգևոր նորմերը մարդու կյանքում համապարփակ բնույթ ունեն, քանի որ մարդը չի կարող երկարաժամկետ խուսափել իր հոգու էության հոգեղեն հաղորդակցության ձգտումից, որը չի ապահովում անշունչ նյութական ունեցվածքը: Ներքին հոգևոր դատարկության զգացումը մարդուն մղում է գտնել հոգևոր հաղորդակցություն, որն արտահայտվում է անձնական հավատքի դավանությամբ: Իսկ հավատքն առանց գործի և գործն առանց հավատքի մեռած են (Հակ. 2.14-26): Արդ, քրիստոնյա լինել, նշանակում է կյանքն ապրել հավատքի նորմերով: Իսկ այն արտահայտվում է ներքին մարդու փոփոխությամբ՝ արտացոլելով այդ փոփոխված հարաբերությունը Աստծո, այնուհետև մարդկանց հանդեպ: Այս առնչությամբ Ավետարանն ասում է. «Այն ամենը, ինչ կը կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դո՛ւք արէք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են Օրէնքն ու մարգարէները» (Մատթ. 7:12): Այդուհանդերձ, հատկապես ներկայիս հասարակության մեջ հոգևոր նորմերի փոխհարաբերության նվազ լինելու պատճառով շուկայական հարաբերությունների արժեքները թափանցել են այնպիսի բնագավառներ, որտեղ նախկինում այդպիսի հարաբերություններ չէին գործում, կամ սակավ էին գործում, ինչպես օրինակ՝ քաղաքականություն, իրավունքի դաշտ, առողջապահություն, կրթություն և այլն: Ավելին կարելի է ասել, որ այդ շուկայական արժեքները իրենց դրոշմն են թողնում միջանձնային հարաբերություններում: Այս ամենը հատկապես ակնհայտ է անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ բարոյական նորմերը երբեմն դիտվում են որպես խոչընդոտ շահույթ ստանալու համար, իսկ սոցիալական արժեքները զիջում են շուկայական արժեքներին: Երբ շահույթ ստանալու շարժառիթը հավասարվում է բարոյական սկզբունքներին, այդ ժամանակ սկսում է ծաղկել նաև կոռուպցիան: Այդ դեպքերում կազմապերպությունները չեն աշխատում մարդու կյանքի բարելավման համար, այլ որպեսզի առավելապես շահույթ ստանան:

Իսկ վատթարագույնն այն է, որ հասարակության մեջ այդպիսի մարդկանց գնահատում են ոչ թե իրենց հոգևոր, մտավոր, գործնական արժեքների կարողությունների համար, այլ թե ինչքան գումար կարող են բերել կամ ունեցվածք են կուտակել, կամ դրամ են կարողացել աշխատել: Եկամուտի հավասարեցումը էթիկայի հետ մարդկության ամենամեծ սխալներից մեկն է: Ամեն ինչ դիտարկելով շուկայական հարաբերությունների չափանիշներով՝ մարդու նպատակը դառնում է ունեցվածքի կուտակումը և նյութականին ծառա դառնալու իրողությունը: Ավետարանն ասում է, որ մարդ չի կարող ծառայել երկու տիրոջ: «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մէկին կատի եւ միւսին կը սիրի, կա՛մ մէկին կը մեծարի եւ միւսին կարհամարհի. չէք կարող ծառայել Աստծուն եւ՝ մամոնային» (Մատթ. 6.25): Շահույթ ստանալու շարժառիթը, եթե անցնում է ներդաշնակության սահմանը, ապա այն ակամայից ազդում է ամբողջ հասարակության գործընթանների վրա: Անհրաժեշտ է, որպեսզի առողջ գործարարության զարգացման համար նման իրավիճակը փոփոխվի: Ավելի առողջ հասարակություններում գործարարները հիմնվում են բարոյական նորմերի վրա՝ ստեղծելով էթիկայի կողեքսներ, որոնք կիրառելի են դարձնում իրենց գործունեության համար: Հաճախ էթիկայի նորմերի անտեսումը ծնվում է մարդու մեջ գործող հպարտությունից:

Ձեռնարկատերը, ինչպես և ամեն մարդ, իր ճանապարհի ընթացքում անցնում է տարբեր փորձությունների միջով: Փորձությունները նաև պատճառ են, որպեսզի անհատը ճանաչի իր բնության տկարությունը, որովհետև մարդը շատ անգամ, երբ հաջողության է հասնում, կարծում է, թե իր ձեռքում է երջանկաբար ապրելու ուղին: Իր խնդիրն է՝ բոլոր փորձությունների ընթացքում պահպանել խաղաղությունը և հաշտությունն Աստծո հետ, ինչպես նաև լինել հաշտ ու խաղաղ մարդկանց հետ: Պետք է հիշել, որ փորձությունը համարվում է գործունեության և՛ հաջողությունը, և՛ անհաջողությունը: Հաջողության դեպքում գործարարը փորձության է ենթարկում իր «ես»-ը, հպարտությունը: Եկեղեցին, մահացու մեղքերը թվարկելիս, առաջինը նշում է հպարտությունը, այն համարվում է ամենածանր մեղքը, որից ծնվում են նաև այլ մեղքեր: Հպարտությունը համարվում է հակառակություն Աստծո կամքին, ինքնամեծարումը այլ մարդկանց նկատմամբ, հավատն իր բացառիկության ու գերազանցության վերաբերյալ ուրիշների նկատմամբ, ցանկությունը բոլորին ենթարկել իր կամքին, արհամարհական վերաբերմունքն այլ մարդկանց հանդեպ և այլն: Հպարտությունն ինքնակենտրոնության լավագույն դրսևորումներից մեկն է, երբ

մարդ կամենում է, որ Աստված և մարդիկ պատվեն իր շուրջը, այլ ոչ թե ինքը մյուսների հետ միասին Աստծո շուրջը: Քրիստոնյա ձեռնարկատերը միշտ հիշում է, որ Աստված հպարտներին հակառակ է, իսկ հեզերին տալիս է շնորհներ (Հակ. 4.6, Ա Պետր. 5.5): Եթե ձեռնարկատերը հպարտանում է, այդ դեպքում նրա հաջողությունը արժանավայել չի լինում, հպարտությունը նրան զրկում է Աստծո փառքի ներկայությունից:

Անհաջողությունների դեպքում փորձվում է կայունությունը, ձախողումը դառնում է առիթ սխալներից եզրակացություններ կատարելու հնարավորության համար: Անհարժեշտ է լինում ուղղել բացթողումները և չընկնել հուսահատության մեջ: Աստծո հանդեպ խոնարհությունը, հաշտությունը կայանում է համբերատարության մեջ: Պահպանելու համար այդ ամենը պետք է առանց սադրանքների դժվարությունները հաղթահարել: Պետք է ունենալ կարողություն տանելու հարվածներն իր անձնասիրության նկատմամբ և ծայրահեղությունների մեջ չընկնել շրջապատի հանդեպ:

Առանց խոնարհության հոգու փրկությունն անհնարին է, իսկ մեկ խոսքով, միանգամից խոնարհություն սովորելը դյուրին չէ, անհրաժեշտ է փորձառություն և ճանապարհ, առանց այս իրողությունների Աստծո արքայությունը մտնել դժվար կլինի, որոնք ձեռք են բերվում դժվարությունների, նույնիսկ տառապանքների գնով: Քրիստոնյա գործարարը բոլոր փորձություններն ընդունում է որպես խոնարհության դպրոց, որը նրան թույլ է տալիս վերաիմաստավորել արժեքները՝ համաձայն քրիստոնեական բարոյագիտության: Ցուցաբերելով խոնարհություն ձեռնարկատիրական գործում՝ գործարարը գնում է դեպի փրկության ճանապարհը, դեպի Երկնքի Արքայություն: Խոնարհությունը թույլ է տալիս կատարել պատվիրանները, քանի որ հենց հպարտությունը և գայթակղությունները հեռացնում են մարդուն և հակում դեպի մեղքը: Գործարարը ձգտում է գործարար կյանքի բոլոր իրադրություններում հետևել պատվիրաններին: Բոլոր դժվարին ու էթիկական ոչ միարժեք իրադրություններում լուծումների որոշումը պետք է պատվիրանների իրագործման սահմաններում լինի: Գործարարը հավատում է, որ Աստծո խոսքը բոլոր դժվարին իրադրություններում համարվում է բանալի բոլոր խնդիրների լուծման համար:

Առաքինի ձեռնարկատիրությունը, ինչպես կյանքի մի բնագավառ, բարոյական նորմերով առաջնորդվող արդարացի գործունեություն, ծառայում է Աստծուն և մարդկանց: Ձեռնարկատիրոջ ծառայությունը կայանում է մարդկանց տնտեսական

համայնքի կազմակերպման համար, որտեղ ամեն անգամ՝ ըստ իր համապատասխան կոչման, տաղանդի, գիտության, կարողությունների և ազատ ընտրության, արժանի կերպով ստանում է իր կոչումն ու իրավունքը, որպես գործընկեր, կառավարիչ, մասնագետ կամ աշխատակից՝ համապատասխան անհրաժեշտ իր մասնագիտական որակավորմամբ:

Իր ծառայության մեջ քրիստոնյա գործարարը ձգտում է իրագործել Աստծո կամքը: Նա հավատում է, որ իր կամքի համընկումն Աստծո կամքի հետ ապահովում է իր հաջողությունը ծառայության մեջ, գործում: Այս բոլորի հետ միասին պետք է հաշվի առնել, որ Աստծո կամքը լինում է աստվածային բարեհաճությամբ և երկրորդը՝ թույլտվությամբ, երբ մարդուն թույլ է տրվում ազատորեն գործել աստվածային կամքին հակառակ: Աստծո կամքը չի սահմանափակում մեր ինքնիշխանությունը: Մարդու արարքները կամ համապատասխանում են Նրա կամքին, կամ մարդը գործում է միայն իր կամքի թելադրանքով՝ անտեսելով Աստծո կամքը և ցանկանալով անպայման գործել այնպես, ինչպես կարծում է, թե իր համար լավ է: Իսկ երբ մեզ հանձնում ենք Աստծո կամքին և փնտրում ենք այն, ինչը չենք ուզում, այլ թե ինչն է Իրեն պետքական, անհրաժեշտ և միևնույն ժամանակ մեզ համար օգտակար, այդ դեպքում լինում է Իր կամքը՝ աստվածահաճությամբ, օգտակար և մեր հավիտենական փրկությանը նպաստող, իսկ Աստծո թույլտվության կամքի համաձայն՝ մարդու ճանապարհը լի է փորձություններով:

Այս ամենից ելնելով՝ կարելի է երկու ճանապարհներ զատորոշել: Առաջին ուղին այն է, որ աստվածային նախախնամության միջոցով մարդիկ ինքնուրույն ընտրում են իրենց գործունեության բնագավառը և իրագործման միջոցները, որին և մարդը կոչված է: Այս պարագայում Աստված օրհնում է մարդուն՝ ցույց տալով անհրաժեշտ օգնություն: Այդ աջակցությունը բերում է նրան, որ մարդը, հաղթահարելով դժվարությունները, սովորում է ուղղել սխալները և մոլորությունները: Ճիշտ է տեսնում իր գործունեության տեղը, դերն ու նշանակությունը մարդկանց կյանքում:

Բայց և հնարավոր է և երկրորդ ուղին, երբ մարդ ընդունում է այն որոշումը, որն Աստծո կողմից չունի օրհնություն: Այս դեպքում մարդու գործունեությունն իրագործվում է աստվածային նախախնամության թույլտվությամբ: Արարիչը մարդուն հնարավորություն է տալիս իրականացնել այս կամ այն գործը, աշխատանքը և համոզվել, որ այդ գործը, աշխատանքը չի նպաստում իր հավիտենական կյանքի փրկությանը և ոչ էլ մարդուն օգտակար լինելուն:

Ձեռնարկատիրությունը համարվում է աշխատանքի ձևերից մեկը՝ բարոյական, հավասար իրավունքներով այլ աշխատանքի ձևերի հետ: Եկեղեցին օրինում է աշխատանքը, որն ուղղված է մարդու բարօրությանը, այս առումով չի տրվում որևէ նախապատվություն մարդկային աշխատանքի որևէ ուղղությանը, եթե այն համապատասխանում է քրիստոնեական բարոյագիտական նորմերին:

Առակներում մեր Տեր Հիսուս Քրիստոսը անդրադառնում է տարբեր մասնագիտությունների՝ չառանձնացնելով նրանցից մեկը՝ իբրև առավելագույն: (Մարկ. 4.3-9), (Ղուկ. 12.42-48), (Մատթ. 13.45-48), (Մատթ. 20.1-16): Բերված օրինակներում երևում է ձեռնարկատերը/առևտրական/, կառավարիչ/տան կառավարիչը/, վարձու աշխատողները /խաղողի այգու վարձու աշխատողները/, ազատ բանվորները /ձկնորսներ, սերմնացանի աշխատողներ/:

Աշխատանքը մարդու կյանքի անբաժանելի մասն է: Աշխատանքը մարդու ստեղծագործական բացահայտումն է, ում տրված է լինել արարչակից և համագործակից Աստծուն: Աստծո խոսքը ոչ միայն ուշադրություն է հրավիրում մարդկանց իրենց ամենօրյա աշխատանքին, այլև փոխանցում է յուրահատուկ ռիթմ՝ /կիրակի օրը/ հանգստյան և աշխատանքի օրերը:

Քրիստոնեական հիմունքները պետք է առկա լինեն այն բոլոր բաղադրիչների մեջ, որոնք կազմում են հավատացյալ մարդու կենսական շահերի ոլորտը: Հավատացյալը չի կարող իր կյանքի հոգևոր և բարոյական հենքից մեխանիկորեն դուրս հանել մասնագիտական կամ գիտական շահերը, առավել ևս քաղաքական, տնտեսական, սոցիալական գործունության, զանգվածային լրատվամիջոցներում իր կատարած աշխատանքը համարել մասնավոր, չառնչվող հոգևոր նորմերին: Հոգևոր նորմերը հավատացյալ մարդու համար համապարփակ, բազմակողմանի բնույթ ունեն: Ժամանակակից հասարակությունը մարդուն ամեն կերպ այն միտքն է ներշնչում, թե քրիստոնեական հավատքը մարդկային անհատականության բացառապես ներքին գործն է և այն կարող է չառնչվել տարբեր մասնագիտություններում, բնագավառներում: Այս առումով փորձ է կատարվում հավատքը և կյանքը տարանջատել միմյանցից:

Գործարար էթիկան իր ուրույն տեղն ունի փոխհարաբերությունների մեջ: Խախտելով այս կամ այն վարքագծի նորմերը՝ մարդը վտանգում է իր հեղինակությունը: Գործարարության մեջ այդպիսի սխալները կարող են ավելին արժենալ, քան փողը կամ կարիերան: Ցանկացած գործարարություն բազմաթիվ մարդկանց համաձայնեցված գործողություն է, և այդ գործողության

արդյունավետությունը ուղղակիորեն կախված է իրենց կառուցած մարդկային փոխհարաբերություններից:

Գործարար էթիկան բարոյական սկզբունքների և ձեռնարկատիրական գործունեության համադրություն է: Շատերի մոտ հնարավոր է, որ այս հարցերին անդրադառնալը հիմնավոր և պարզապես կիրառելի, արդյունավետ չեն բազմաթիվ այլ խնդիրների հետ համեմատած: Այնուամենայնիվ, առողջ մտածելակերպ ունեցող գործարարները հոգնել են «առանց կանոնների խաղից» և այդ պատճառով հակված են քաղաքակիրթ գործարարությանը՝ հիմնվելով քրիստոնեական էթիկայի չափանիշների վրա:

Ձեռնարկատիրական արժեքներ

Ձեռնարկատիրական գործունեության մեջ կարևոր է, թե ինչպիսի քաղաքականությամբ է այն իրականացվում: Գործարարությունը կամա, թե ակամա մասնակից է հասարակության ոչ միայն տնտեսական կյանքի վրա ազդեցություն ունենալու հարցում, այլև արժեհամակարգի ձևավորման գործում:

Բիզնես էթիկայի անառարկելի արժեքը կայանում է նրանում, որ այն տալիս է գործնական խորհուրդներ, թե ինչպես և ինչ անել, որպեսզի համամարդկային արժեքները, ինչպես՝ ազնվությունը, վստահությունը, արդարությունը յուրաքանչյուր ձեռնարկության կորպորատիվ կյանքի անբաժանելի մասը լինեն, ինչպես գործընկերները, աշխատակիցները վարվեն, որպեսզի խուսափեն դժվարին հանգամանքների մեջ հայտնվելուց: Գործարար արժեքներով առաջնորդվելը և դրանց ստեղծումը լավագույն գրավականներից մեկն է օտարերկրյա կապիտալը ներգրավելու հարցում: Այն դեպի արտասահմանյան նորանոր շուկաներ մուտք գործելու և միջազգային ձեռնարկատիրական մակարդակի հասնելու լայն հնարավորություն է տալիս:

Արժեքները կարելի է բաժանել երկու զուգահեռների: Արժեքներ, որոնցով առաջնորդվում են գործարար հարաբերությունները, որոնք հիմնարար արժեքներ են, և արժեքներ, որոնք ստեղծվում են ձեռնարկատիրական գործունեության արդյունքում: Հիմնարար արժեքների շարքում առանձնանում են ազնվությունը, ողջամտությունը, գործնականությունը, աշխատասիրությունը և այլք: Մյուս կողմից ձեռնարկատիրությունը արժեքների ստեղծման առումով միանշանակորեն նույնպես առնչվում է հոգևոր աշխարհին, որովհետև ամեն մի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստեղծվում են լավ կամ վատ արժեքներ, կամ պատճառ դառնում արժեքների ձևավորման ու ստեղծման համար: Քրիստոնեական էթիկայի սահմանները թույլ չեն տալիս այնպիսի գործունեություն, որը մարդուն կարող է տանել դեպի մեղք և գայթակղություն: Երբևէ աստվածահաճո չի կարող լինել այնպիսի հաստատությունը, ապրանքը, գործունեությունը, որտեղ մարդը հոգևոր առումով անկում է ապրում՝ մխրձվելով ազահության, խաղամոլության, շնության, խարդախության մեջ: Արդ, քրիստոնեական էթիկան կանխում է այդպիսի գործարարության զարգացումը, որն իրականում վնասում է հասարակությանը և խելաթյուրում բարոյահոգեբանական արժեքները: Գործարարությունը պարզապես

շահույթ ստեղծելու ուղի չէ, այլ արժեքներ ստեղծելու ճանապարհ: Հաջողված գործարար Ջոն Մաքեյը, ով ստեղծել է մի հզոր ընկերություն՝ “Whole Foods Market” անվամբ, նշում է, որ ընդհանրապես հաջողակ գործարարությունը ստեղծում է արժեքներ: Առաքինի գործարարությունը համագործակցություն է աստվածային կամքի և նախախնամության իրագործման հետ՝ աստվածային արարչագործության պահպանման ու բարգավաճման համար:

Հատկանշական է, որ արդյունավետությունը և շահույթը համարվում են կարևոր գրավականներ՝ ձեռնարկատիրական գործառույթների պատշաճ իրականացման, գործարար ծառայությունների պարտականությունների պատշաճ կատարման համար: Այս առումով շահույթը չի դիտարկվում անհատական և շահադիտական տեսանկյունից, ինչպես օրինակ այն ծառայեցնել բացառությամբ հարստանալու, ձեռնարկատիրոջ իշխանության ամրապնդման ու ազդեցության համար:

Ամերիկացի գործարարներից մեկը նշում է, որ բիզնես էթիկայով առաջնորդվելու հիմնական ուղիներից մեկն այն է, որ արտադրողականությունը մշտապես ավելի կարևոր է, քան որևէ ակնհայտ շահույթ: Ինչպես օրինակ՝ ունենալով տարբեր հումքեր, որոնցից մեկն ավելի թանկ է, նրանցից նախընտրելի է լավագույնը անկախ իր գնից: Այսինքն՝ պատրաստել որակով արտադրանք՝ վերցնելով լավ հումքը: Որակով արտադրանքը ապահովում է վաճառքի շարունակականությունը: Եվ եթե ինչ-ինչ հանգամանքներում շահութաբերությունը տուժում է, բայց և այնպես գործարարը վաստակում է ավելի էական շահույթ, այսինքն՝ հաճախորդի վստահությունը, որն ավելի էական է, քան փողը: Բիզնեսում գոյություն ունի ոսկե կանոն «հոգ տար քո հաճախորդների համար, և շուկան հոգ կտանի քեզ համար»: Սույն կանոնը ամերիկացի գործարարների հաջողության գրավականներից մեկն է: Ինչպես օրինակ՝ մի անգամ «Ջեներալ Մոթորս»-ը ծախսել է երեք և կես միլիոն դոլար տեղեկացնելու համար իր վեց և կես միլիոն գնորդներին, հաճախորդներին, որ իրենց գնած մեքենաներն ունեն անսարքություն: Այսպիսով ստեղծվում է ձեռնարկատիրոջ մասնագիտական հեղինակություն: Մենք գիտենք, որ արժանահավատ գործարարությունը ավելի երկարատև և հաջողակ դեր կարող է ունենալ շուկայում: Դա այն է, երբ որակով արտադրողականությունն ավելի է գնահատվում, քան շահութաբերությունը: Անորակ ապրանքներ արտադրելով և դրանցով որոշակի ժամանակահատված արագ շահույթ ունենալով հնարավոր չէ վաստակել հեղինակություն, ինչպես նաև գնորդների, հաճախորդների

վստահությունը: Շահույթը գործի հաջողությամբ իրագործման արդյունք է և աղբյուրը նրա հետագա զարգացման: Այդ իսկ պատճառով, շահութաբեր գործը, եթե այն իրականացվում է բարոյական կերպով, ոչ միայն ձեռնարկատիրոջ հետաքրքրության սահմաններում է, այլև աշխատողների, պետության, գործընկերների և այլ առնչակից անձանց: Այդուհանդերձ, հարց է առաջանում՝ ինչպես կարող ենք խոսել գործարար բարոյական մշակույթի մասին, որի նպատակը նաև արժեքներ ստեղծելն է և ոչ թե պարզապես սպառողական հասարակությունը կամ ինչպես առաջնորդվել քրիստոնեական էթիկայի կանոններով, երբ անառողջ մրցակցություն է տիրում, մասնավորաբար զարգացող երկրներում, որտեղ դաժան մրցակցություն է, պայքարը գոյատևման համար, ճնշումներ իշխանությունների կողմից, բարձր հարկեր, արհեստական մենաշնորհներ, հովանավորչություն, մեծ չափերի հասնող կոռուպցիա...: Ցավալիորեն կարելի է նշել, որ մեր հասարակությունում գործարարությունը առաջնորդվում է վայրի կապիտալիզմի վարքագծով: Բացակայում է արժեքային համակարգը: Նրանց շարքերում, ովքեր զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, շատ են այնպիսիք, ովքեր նպատակին հասնելու համար խտրականություն չեն դնում միջոցների մեջ՝ անտեսելով քրիստոնեական էթիկայի կանոնները և օրենսդրությունը: Այդ իսկ պատճառով ձեռնարկատիրական գործունեությունը մարդկանց գիտակցության մեջ թույլ է կապված բարոյականության, էթիկայի մշակույթի հետ: Պատճառներից մեկն այն է, որ տիրում է բարոյահոգեբանական համընդհանուր անվստահություն ձեռնարկատիրական հարաբերություններում: Այն հարցին, թե ինչպես հաջողություն ունենալ բիզնեսում, երիտասարդ գործարարները պատասխանում են՝ խաբելով, խարդախությամբ, խորամանկությամբ և այլ բացասական երևույթների միջոցով: Գերխնդիր է շահույթի ապահովումը բարոյական և իրավական նորմերի ոտնահարման ամեն գնով: Նման գործարարությունը չի կարող դուրս գալ տվյալ անառողջ միջավայրից և միջազգային գործարարության հաղորդակցության ուղիներում զարգանալ: Երբ չեն գործում քրիստոնեական բարոյագիտության չափորոշիչները, առաջանում է խնդիր, որ այն, ինչը մեկի համար համարվում է բարիք, մյուսի համար ոչ միշտ է բարիք: Այս դեպքում առաջանում է բանավեճ, երբ կողմերից ամեն մեկը իր դիրքորոշումը համարում է արդարացի և ճշմարիտ: Երկակի ստանդարտների կիրառումը ստեղծում է անորոշություն: Սակայն ողջամիտ մտածողությունը թելադրում է, որ այդպիսի գործարար հարաբերություններն ի վերջո տանուլ են տրվում, իսկ երկրի տնտեսությունը չի կարող լինել արդյունավետ, որից և

տուժում է շուկան, և առևտուրը: Բիզնեսը կարող է հաջողված լինել միայն այն դեպքում, երբ նրա մասնակիցները ղեկավարվում, առաջնորդվում են բարոյական արժեքներով: Ո՞վ կցանկանա ունենալ գործ, առավել ևս երկարատև հարաբերություններ գործընկերների հետ, որոնց չի կարող վստահել: Դրա համար գործարարներին անհրաժեշտ է ունենալ հուսալի, բարեպաշտ գործընկերոջ վարքագիծ: Եվ ովքեր հասկանում են այս իրողությունը, մեծ ջանքեր և միջոցներ են գործադրում ստեղծելու համար այդպիսի դրական պատկեր և պահպանելու այն, որպեսզի գործընկերները և հաճախորդները վստահությամբ վերաբերվեն իրեն: Եթե ամենօրյա գործունեությունը չի համապատասխանում այս իրողությանը, ապա ուշ, թե շուտ գործընկերները, հաճախորդները կհեռանան: Այս ամենի արդյունքը կարող է բերել ձեռնարկության սնանկությանը: Այսպիսի միջավայրը հատկապես անընդունելի է միջազգային գործընկերների համար, որոնք մտադիր են ներդրումներ կատարել, քանի որ նմանօրինակ վիճակում ռիսկերն ու կորուստներն անչափ մեծ են:

Միջազգագային բիզնեսում գործարար էթիկան է թելադրում հիմնարար «խաղի կանոնները», առանց որի այն խնդրահարույց է դառնում, ռիսկային և անկախատեսելի: Հետևաբար միջազգային ասպարեզում ավելի կարևորվում է գործարար էթիկայի սկզբունքների պահպանումը՝ ազնվությունը և հուսալիությունը ներառվում են գործարարության տնտեսական կատեգորիաներում: Գործարար էթիկան մի բաղկացուցիչ հատվածն է այն իրողության, որն անհրաժեշտ է իրագործել ընդգրկվելու համար Առևտրի համաշխարհային կազմակերպության և միջազգային շուկայի կապիտալի մեջ: Եվ այս ամենի համար անհրաժեշտ է բարձրացնել ընկերության հեղինակությունը, ներգրավել հուսալի գործընկերներ, պահել լավագույն աշխատակիցներին, բարձրացնել բաժնետերերի վստահությունը: Վստահությունն այնպիսի արժեք է, որը մեծացնում է արդյունավետությունը, կրճատում ժամանակի կորուստը: Կարելի է ձևակերպել առաքինի գործարարությունը իբրև օրենքի տառից անցում վստահության ոգու: Ընկերությունները պետք է գիտակցեն, որ անկեղծությունը, արժանահավատությունը, արդարությունը, խոստումների կատարումը և թափանցիկությունը ոչ միայն բարձրացնում են վստահությունը սեփական անձի նկատմամբ, այլև մեծ արդյունավետությամբ դուրսին են դարձնում փոխշահավետ առևտրային գործարքները, հատկապես միջազգային ասպարեզում:

Ընդհանուր առմամբ բարոյական արժեհամակարգի տեսանկյունից քրիստոնյա ձեռներեցի համար որպես ուղեցույց հանդիսանում է քրիստոնեական բարոյագիտության վարդապետությունը: Այդուհանդերձ, գործարար մարդու համար կարելի է առանձնացնել հետևյալ արժեքները կամ որակները.

Ազնվությունը: Այս որակը հնարավորություն է տալիս լինել հուսալի և օգտավետ գործընկերների համար, հարգված լինել աշխատակիցների, հեղինակություն ունեցող արտադրողների և պետության կողմից:

Գործնականություն: Կարողություն կազմակերպելու համապատասխան այնպիսի մրցունակ արտադրություն, որի պահանջարկը առկա է մարդկանց մոտ:

Աշխատասիրություն: Կարողություն մշտապես ներգրավված լինելու ձեռնարկատիրական աշխատանքների մեջ, տարբեր իրավիճակներում աշխատասիրության կամքի արտահայտություն ձեռնարկած գործը զարգացնելու և ընդլայնելու համար:

Պատրաստակամություն: Արդարացված ռիսկի դիմելու, կարողություն որոշումների պատասխանատվություն կրելու, որոնք օբյեկտիվ կերպով անհրաժեշտ են, բայց իրենց մեջ կրում են ձեռնարկատիրական գործունեության ընթացքում գոյություն ունեցող սովորական ռիսկերը:

Ողջամտություն: Կարողություն անհրաժեշտաբար խուսափելու համար անհարկի, շտապ, անմտածված որոշումներից, որի արդյունքում կորսվում են ձեռնարկատիրոջ ռեսուրսները:

Հարկ է նշել, որ քրիստոնեական էթիկայի արժեքները գործարար կյանքում համամարդկային հիմնարար արժեքներն են և կառուցվում են այնպիսի արժեքի վրա, ինչպիսին ազատությունն է: Սա նշանակում է, որ գործարարը կամ կառավարիչը պետք է գնահատի ոչ միայն իր ձեռներեցային գործունեությունը, այլև իր մրցակիցների ազատությունը, որն արտահայտվում է նրանց գործերին՝ հատկապես ներքին խնդիրներին ու շահերին չմիջամտելով:

Մարդն ապրում է փոխկապակցված, փոխհաղորդակցության մեջ գտնվող հասարակությունում: Գործարարը չի կարող շարունակաբար այնպիսի գործունեություն ծավալել, որը պետք է լինի միայն իր համար շահութաբեր ու եկամտաբեր՝ տարբեր զարտուղի ճանապարհներով կուտակելով հարստություն և ընդլայնելով իր գործունեության ոլորտը: Այդպիսի մոտեցումը առարկայական ու ժամանակավոր հաջողության մոտեցում է, քանի որ պատճառահետևանքային

կապի միջոցով ուշ, թե շուտ նման գործելակերպը դառնում է տվյալ գործարարի ու նրա գործունեության անհաջողությունների շարքը և սնանկացման պատճառը:

Գործարար հարաբերությունների մեկ այլ հիմնարար սկզբունքը համբերությունն է, որը նշանակում է հանդուրժողականությամբ հաղթահարել գործընկերների, աշխատակիցների, հաճախորդների տկարություններն ու թույլ տված սխալները: Համբերությունը ստեղծում է փոխադարձ վստահություն, փոխըմբռնում ու անկեղծություն: Օգնում է չեզոքացնել կոնֆլիկտային իրավիճակները:

Համաշխարհային տեսանկյունից դիտարկելիս գործարար հաջողություններն այսօր առավել կախված են տեխնոլոգիաներից, կրթված անհատներից և էթիկայի արժեքներից: Միայն բաց և առողջ հասարակությունն է ի վիճակի ստեղծել ստեղծագործ մթնոլորտ, որտեղ կարող են ծնվել գաղափարներ, և նորարարությունը կարող է տվյալ երկրի համար բարեկեցություն ապահովել ու գործարար միջավայրի համար նոր հեռանկարային դռներ բացել:

Սոցիալ - բարոյական պատասխանատվություն

Ձեռնարկատերերը և ձեռնարկությունների ղեկավարներն իրենց ստեղծագործական մոտեցմամբ և աշխատելու, գործակցելու պատրաստակամությամբ սոցիալ-շուկայական տնտեսակարգի հենասյուններն են: Ողջ հասարակությունն է օգուտ քաղում այն ձեռնարկություններից, որոնք արդյունավետ են աշխատում և շահույթ են ստանում: Շահույթ ստանալու ձգտումն ապահովում է ձեռնարկության հետագա ապահով զարգացումը՝ լուծելով նաև հասարակական խնդիրներ: Քրիստոնեական էթիկան թելադրում է ազատ և սոցիալական պատասխանատվությամբ առաջնորդվող ձեռնարկատիրության զարգացում: Առաքինի ձեռնարկատերերը և ձեռնարկությունների ղեկավարներն ապահովում են հուսալի աշխատատեղեր և իրենց համբավով ու մշակութային ինքնությամբ նպաստում երկրի բարգավաճմանը: Սեփականությունը դիտվում է որպես Աստծո կողմից մարդուն տրված պարգև, և այդ սեփականության օգտագործման ժամանակ մարդիկ պետք է ունենան պատասխանատվության զգացում Արարչի, հասարակության և բնության հանդեպ: Սեփականությունը պատասխանատվություն է և խնամակալություն: Ցանկացած սեփականություն պետք է ծառայի ոչ միայն տվյալ անհատի, այլև ընդհանուրի բարօրությանը:

Նա, ով զբաղվում է ձեռնարկատիրությամբ, ստանձնում է որոշակի պատասխանատվություն. գործարար և հասարակական հարաբերություններում, շրջակա միջավայրի, ապագա սերունդների և ուղղակիորեն աշխատակիցների, ինչպես նաև վերջիններիս ընտանիքների հանդեպ:

Սոցիալ-շուկայական տնտեսակարգի շարժիչ ուժը որոշակի պատասխանատվությամբ գործող սեփականատեր-ձեռնարկատերերն են՝ Այդ պատճառով անհրաժեշտ է, որ գործարարների գիտակցության մեջ ավելի մեծանա ծառայող կառավարիչների անհատական պատասխանատվության չափը՝ Մյուս կողմից՝ ձեռնարկությունների սոցիալ և բարոյական պարտականությունները ընդունված է նայել չորս աստիճանների սահմաններում՝

1. Տնտեսական պատասխանատվության մակարդակ՝

Սա այն պատասխանատվությունն է, որը կազմակերպությունը և իր ղեկավարությունը կրում են սեփականատիրոջ կամ սեփականատերերի առջև: Այն կարևորվում է նրանով, որ եկամուտ ապահովի և այլն՝ իբրև բիզնեսի գործիք կատարելով իր հիմնական գործառույթը:

2. Իրավական պատասխանատվության մակարդակ՝

Օրենքին հետևելը ամեն մի կազմակերպության պարտականությունն է, որի խախտումը կարող է դառնալ լուրջ պատժամիջոցների կիրառում պետության և ուժային կառույցների կողմից:

3. Բարոյական պատասխանատվության մակարդակ՝

Բարոյական սկզբունքներին հետևելու պայմանն է: Այս մակարդակի պատասխանատվությունը թերևս ընկած է ներքին կարգավորման հիմքում:

4. Սոցիալական պատասխանատվության մակարդակ՝

Այսպիսի պատասխանատվությունն անհրաժեշտ է հասարակության կյանքի որակն ու բարեկեցությունը բարելավելու համար: Այն պատասխանատվության կամեցողության մակարդակն է, որը արդարացնում է կազմակերպության սոցիալական գոյությունը:

Գործարարը պետք է ձևավորի արդար և փոխշահավետ հարաբերություններ աշխատողների հետ: Հարաբերության նորմ է համարվում վարձու աշխատողների և գործարարի միջև արդար և երկկողմ փոխշահավետ հարաբերությունը: Ձեռնարկություններին հաջողության հասնելու համար անհրաժեշտ են լավ կրթված, ստեղծագործ և շահագրգիռ աշխատակիցներ: Գործառույթներին անհրաժեշտ են որոշումներ կայացնելու հնարավորություններ, պատասխանատվություն և ազատ գործելու ուղիներ՝ իրենց ունակությունները և կարողություններն ամբողջությամբ և հաջողությամբ զարգացնելու համար: Կրթությունը և վերապատրաստումը ապահովում են վերջիններիս աշխատունակությունը և առաջադիմությունը: Միաժամանակ գործառույթներին անհրաժեշտ է հիմնավոր աշխատանքային և սոցիալական ապահովագրություն՝ սեփական կյանքը ծրագրել կարողանալու համար: Նրանք իրավունք ունեն ակնկալել համընդհանուր բարեկեցության իրենց

հասանելիք բաժինը: Անարդարությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ գործարարը չի վճարում աշխատողներին կատարած աշխատանքի համար, կամ ձգձգում է այն: Անարդարություն կարող է տեղի ունենալ նաև այն ժամանակ, երբ աշխատողները աշխատանքային ժամին զբաղվում են իրենց անձնական գործերով, ձգտում են աշխատավարձի բարձրացման՝ չապահովելով համապատասխան որակ և համապատասխան ծավալի աշխատանք: Արդարությունը և երկկողմ փոխշահավետությունը բացառում են նմանատիպ գործողությունները, ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում: Ձեռներեցի և աշխատակիցների միջև նման իրավիճակների փոխարեն պետք է լինի օրինական շահերի արդար հավասարկշռություն:

Ձեռնարկատերը իր գործերի զարգացման հարցերում հիմնականում ինքնուրույն է, ինչպես նաև կորպորատիվ մշակույթի բնագավառում: Կրելով պատասխանատվություն այդ ինքնուրույնության համար՝ նրա համար հրամայական է դառնում բարոյական կերպով ստանձնելու և կառավարելու գործը: Երբ մենք խոսում ենք գործարարության մասին, առաջին հերթին հարկ է ասել, որ գործարարը պետք է լինի բարեպաշտ անձնավորություն: Անբարոյական գործարարը վտանգավոր է, ինչպես անբարոյական բժիշկը կամ ուսուցիչը:

Այն դեպքում, երբ գործարարը որոշում է կայացնում ստեղծելու իր կազմակերպության ներսում քրիստոնեական էթիկայի հիմունքներով կորպորատիվ կառավարում, նա կենտրոնացնում է իր գործունեությունը՝ այդ ուղղության վրա ունենալով նաև հոգևորականների խորհրդատվական աջակցությունը: Այսպիսի կորպորատիվ մշակույթը առաջնահերթ արժեք է դարձնում հավատն Աստծո նկատմամբ, և կյանքը հավատքով ապրելու ուղին: Այս ուղին քրիստոնեական բովանդակություն է հաղորդում կորպորատիվ մշակույթի պահպանման համար: Եվ գործընկերների վարքագիծը, նորմերը և օրենքները դիտարկվում են քրիստոնեական էթիկայի անվանդրոյթների համաձայն: Որպեսզի այն լինի պրակտիկ իրականության մեջ, գործարարը պետք է կենտրոնանա հետևյալ դրույթների վրա՝

Կրթություն, լուսավորում՝ ստեղծել պայմաններ սովորելու քրիստոնեական էթիկայի հիմունքները և աշխատակիցների մշակութային, մտավոր մակարդակը բարձրացնելու համար: Այն վերաբերում է ոչ միայն գործարարի անձնական կրթությանը, այլև կորպորատիվ ծրագրերին, որոնք ուղղված են կազմակերպության բոլոր անդամներին:

Միաբանություն՝ հիմնված սիրո ու բարություն գործելու մեջ, հոգևոր և նյութական կապը որպես մեկ միասնություն, ամբողջություն կազմակերպության գործունեության մեջ:

Քրիստոնեական բարոյագիտությունը փրկության ճանապարհի մեջ ընդգծում է աստվածային կամքի անհրաժեշտությունը (Հռոմ. 12:2), ինչպես նաև մարդու կամքի ազատ ընտրությունը: Մարդու իրապես քրիստոնյա լինելու հանգամանքը փաստվում է սիրո արտահայտմամբ Աստծո և մերձավորի նկատմամբ: Բարին գործելու կարողությամբ:

Հարկ է նշել, որ քրիստոնեական էթիկայի հիմունքներով առաջնորդվող կորպորատիվ մշակույթը նպաստում է տնտեսական արդյունավետությանը և կանխում անգործունեության մեջ լինելու կախվածությունը, ինչպես ասում է Սուրբ Պողոս առաքյալը. «քանի դեռ ձեզ մօտ էինք, այս բանն էինք պատուիրում ձեզ. թե՛ ով չի ուզում աշխատել, թող հաց էլ չուտի» (Բ.Թս 3:10): Առաքյալը ջանադրաբար աշխատել է, օրինակ եղել այլոց համար «Եղբայրներ՛ր, յիշեցէ՛ք մեր վաստակը եւ ջանքը, երբ գիշեր-ցերեկ աշխատում էինք ձեզնից որեւէ մէկի վրայ ծանրութիւն չլինելու համար. եւ ձեզ քարոզում էինք Աստծու Աւետարանը»: (Ա Թս 2:9) «...որովհետեւ ինքներդ գիտէք, թէ որչա՛փ դուք պէտք է նմանուէք մեզ, քանի որ ձեզ մօտ երբեք չծուլացանք եւ ոչ ոքի հացը ձրի չկերանք, այլ ջանքով եւ վաստակով զօր ու գիշեր աշխատում էինք՝ ձեզնից ոչ մէկի վրայ ծանրութիւն չլինելու համար. ոչ թէ նրա համար, որ իշխանութիւն չունէինք, այլ որպէսզի մենք մեզ օրինակ դարձնենք ձեզ, որ մեզ նմանուէք» (Բ. Թս 3:7-9): Ավետարանը ցույց է տալիս բարեպաշտ աշխատավորի կերպարի օրինակը: Հայրաբանական գրականությունը զարգացնում է այդ ավանդույթը՝ ընդգծելով, որ աշխարհում իրականացվող բոլոր գործերը կարող են լինել միջոց կրթելու համար հոգին և ավելի հաղորդակից լինելու Աստծո հետ:

Աշխատանքային և տնտեսական գործունեությունը բաց են լուսավորության և հոգևոր լույսի համար: Ինչպես ասում է Սբ. Բարսեղ Կեսարացին՝ պէտք է իմանալ, որ աշխատողը չի աշխատում ոչ միայն նրա համար, որ աշխատանքով ծառայի իր կարիքներին, այլև նրա համար, որ իր աշխատանքով իրագործի Աստծո պատվիրանները: Աշխատանքի գործընթացի հոգևոր կարևորությունը մշտապես շեշտել են հոգևոր հայրերը, ինչպես օրինակ ասում է Կղեմես Ալեքսանդրացին, աշխատանքը կոչում «հասարակական արդարության դպրոց»: Սուրբ Հովնան Ոսկեբերանը նշում է, որ ոչ թե անպատվաբեր է աշխատանքը, այլ անգործությունը:

Քրիստոնեությունը չի ժխտում տնտեսական կառավարումը, բայց այն կենտրոնացնում է, ուղղում դեպի հոգևոր և բարոյական ճանապարհը, ուր առաքինի աշխատանքը դառնում է միջոց կատարելագործման, հոգեդինացման ճանապարհ աշխարհի և մարդկանց համար:

Որպեսզի քրիստոնեական արժեքներով առաջնորդվող ձեռնարկատիրական գործունեությունն ունենա փորձառության փոխանակության հնարավորություն, անհրաժեշտ է ստեղծել միություններ, կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ, մշակել նոր էթիկական սկզբունքներ տնտեսագիտության մեջ: Հեռատես ձեռնարկատերերը գիտեն, որ այս ամենը բխում է իրենց իսկ շահերից: Նրանք պետք է ստեղծեն պայմաններ բիզնես էթիկայի տարածման համար ձեռնարկատիրական մշակույթի մեջ, ինչպես նաև քրիստոնեական մշակույթի տարածումը հասարակության մեջ:

Ձեռնարկատերը իր հնարավորության սահմաններում իրականացնում է աջակցություն եկեղեցուն: Այդպիսի աջակցությունը հնարավոր է իրականացնել և ավանդական ուղղություններով՝ օգնություն և եկեղեցիների վերականգնում, նպաստել եկեղեցու հրատարակչական գործունեությանը, մասնակցություն քրիստոնեական դաստիարակության ծրագրերին, քարոզչությանը, և այլ նյութական օժանդակություններին: Ինչպես նաև աջակցել սոցիալական, բարեգործական, կրթական և այլ հասարակական նշանակալի ծրագրերի զարգացմանը: Փոխանցել առաքինի գործարարության փորձառությունը երիտասարդ և սկսնակ ձեռնարկատերերին, որը գործարարի հետագա գործունեության համար նպաստավոր է:

Բարեգործությունը կարևոր բաժին է ձեռնարկատիրոջ համար իր ծառայության մեջ: Այն պետք է լինի անշահախնդիր՝ իրագործվելով սրտի թելադրանքով: Քրիստոնեական տեսանկյունից բարեգործությունը չի կարող դիտարկվել որպես հասարակական ճանաչման ուղի, այլ միայն որպես միջոց աստվածային կամքի իրականացման համար, որն արտահայտում է ողորմածությունն ու Աստծո գործին հաղորդակից լինելու իրողությունը: Ձեռնարկատերերը կարող են խոսել իրենց բարեգործությունների մասին միայն այն նպատակով, որ բարեգործություն անելու համար ներգրավվեն նոր ձեռնարկատերերի: Նյութական ռեսուրսների ճիշտ օգտագործումը թույլ են տալիս մարդուն հասնել աստվածային օրհնության աջակցությանը: Դրանով հնարավոր է կառուցել եկեղեցի, դպրոցներ, կացարաններ անտունների և հիվանդների համար,

հիվանդանոցներ տառապյալների համար: Եթե հարուստ մարդը ուղղամտորեն է տնօրինում իր ունեցվածքը, այդ պարագայում իր գումարները կարող են իրեն և այլոց ապահովել հավիտենական օրհնություն: Իրականացնելով բարեգործություն՝ ձեռնարկատերը կարող է միավորել այլոց բարեգործությունների հետ, որպեսզի օգնությունը ժամանակին հասանելի լինի: Կարելի է նշել այն հանգամանքը, որ ողջամտությունը անհրաժեշտ է ամեն պարագայում, ինչպես նաև բարեգործության մեջ: Ողջամիտ մարդը կարող է շատ ավելի օգուտ բերել հասարակությանը, քանի որ իր մտածված քայլերով տարեցտարի նա կարող է օգնել մարդկանց՝ իր ներդրումն ունենալով հասարակության բարօրության համար, որտեղ ապրում է ինքը և իր ընտանիքը:

Բնությունն Աստծո համար առանձնահատուկ արժեք ունի: Աստվածաշունչը վկայում է, որ Աստված հոգատար է բնության համար: Հոբի գրքում խոսվում է, որ Աստված անձրև է ուղարկում բույսերի համար: (Հոբ. 38.25): Նա ստեղծել է ավանակի համար անապատը: Նոր Կտակարանում նույնպես տեսնում ենք աստվածային նախախնամության հոգատարությունը (Մատթ. 5.28-30), (Մատթ. 10.29, Ղուկ.12.6): Այստեղ վկայվում է, որ Հիսուս գնահատում է բնության գեղեցկությունը և նրա մեջ տեսնում է Երկնավոր Հոր հոգատարությունը:

Մարդու անկումը պատճառ դարձավ էկոլոգիական աղետի: Հիվանդությունը և մահը թափանցեցին ոչ միայն մարդու մեջ, այլև բնության մեջ (Ծննդ. 3.17-18): Այդ պատճառով մարդը ոչ միայն պատասխանատու է Աստծո առաջ, այլև բնության: Նա մեծ հարված է հասցրել բնությանը, բայց նա կլինի նաև այն էակը, ով կփրկի այն «որովհետև ստեղծուածները մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների յայտնութեանը, քանի որ ստեղծուածները ունայնութեանը հնազանդուեցին (ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստուած հնազանդեցրեց նրանց) այն յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեան հասնելու համար. քանզի գիտենք, որ բոլոր ստեղծուածները հեծեծում են եւ երկունքի ցաւի մէջ են մինչեւ այժմ» (Հռ. 8:20-22): Բնության փրկության առկայությունը, մարդու փրկության ուղին է նաև: Ուստի, միջավայրի պաշտպանությունը և պահպանումը բիզնեսի կարևորագույն խնդիրներից մեկն է: Անհրաժեշտ է հասնել այն արմատական մտածողությանը, որ բնությունը մեկ համակարգ է և եթե նույնիսկ խախտում ես այդ համակարգի այս կամ այն հատվածը, անթույլատրելի է, քանի որ խաթարվում է բնության

ներդաշնակությունը: Մյուս կողմից այդ խախտումը, որը բերում է կարճաժամկետ կամ որոշակի ժամանակահատվածի շահութաբերության բիզնեսի մեջ, հետագայում դառնում է հենց այդ բիզնեսի ավարտման ուղին, ինչպես նաև ապագա սերնդի գոյության վտանգը, համընդհանուր կերպով՝ մարդկության կյանքի շարունակականության ճգնաժամ: Բնության օրենքները տրված են Աստծո կողմից և դրանք խախտելը ճիշտ չէ: Քրիստոնյա ձեռնարկատերը պետք է խուսափի հանուն իր անձանական շահի վնասելու բնությանը, որն իրականում հարված է հենց իր սերնդի ու գործունեության հետագա զարգացմանը:

Գործարարի հարաբերությունը պետության և հասարակության հետ

Ձեռնարկատիրոջ հիմնական հարաբերությունը պետության հետ օրինապահությունն է: Գործարարը իր գործունեությունը կառուցում է ճանաչելով պետության օրենքների նորմերը և հաշվի առնելով այդ հարաբերությունը տնտեսական գործառույթներում: Իրենց հարկերով ձեռնարկատերերը պետությանն են տրամադրում միջոցներ, որոնք անհրաժեշտ են վերջինիս՝ իր առջև դրված խնդիրները լուծելու համար: Միաժամանակ հարկային իրավունքը չպետք է բարձր հարկաչափերով սահմանափակի ձեռներեցների ֆինանսական ազատություններն ու հնարավորությունները: Ցածր հարկաչափերով հարկային համակարգը աշխատանք և նախաձեռնություն է խթանում և հնարավորություն տալիս կանխարգելել կենսական ռիսկերը:

Սբ. Պողոս առաքյալի խոսքերի համաձայն ամեն անհատ պետք է ենթարկվի պետության օրենքներին, որպեսզի հասարակության մեջ չարը չտարածվի (Հռոմ. 13.1-4): Համագործակցությունը իշխանությունների հետ կայանում է բարի գործերի համար և բարոյական դիմադրություն է ցուցաբերվում ընդդեմ մեղավոր գործողությունների, հատկապես, երբ հարց է բարձրացվում Աստուծուց և հավատքից ստիպելու հրաժարվելու խնդրում:

Քրիստոնեության առաքելությունը գործարարության բնագավառում հիմնականում նրանում է, որ քրիստոնեական բարոյագիտությունը պետք է նպաստի մարդկանց փրկությանը, ինչպես նաև պետական համակարգում գտնվող մարդկանց համար: Այդ մասին գրում է Սուրբ Պողոսը «Արդ, ամենից առաջ աղաչում են աղօթք անել, խնդրել, պաղատել, զոհութիւն մատուցել բոլոր մարդկանց համար, մանաւանդ թագաւորների եւ բոլոր իշխանաւորների համար, որպէսզի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարենք մեր կեանքը, կատարեալ աստուածապաշտութեամբ եւ սրբութեամբ. այդ է բարին եւ ընդունելին մեր Փրկչի՝ Աստծու առաջ: Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկուեն եւ հասնեն ճշմարտութեան գիտութեանը» (Ա Տմ 2:1-4): Իսկ այդպիսի առաքելություն հնարավոր չէ իրականացնել, եթե իշխանությունների հետ հաղորդակցվելիս չես ստեղծում կառուցողական դիրքորոշում: Այս հարցում ձեռնարկատերերի խնդիրն է, որ նրանք ոչ թե տապալեն իշխանությունները, այլ ազդեն այդ իշխանություններում դրական, հիմնավոր փոփոխություններ իրականացնելու համար: Այս դիտանկյունից նայելով՝ քրիստոնեական

ձեռնարկատիրական էթիկան չի ընդունում այն մոտեցումը, թե քաղաքականությունը և էթիկան անհամատեղելի են միմյանց հետ: Քրիստոնյա ձեռնարկատիրոջ հատուկ դերը մատնանշվում է այն հանգամանքով, որ իր մասնակցությամբ նպաստի նոր քաղաքական որակական հասարակության ձևավորմանը, որը հետաքրքրված է արդար մրցակցությամբ և նոր տաղանդների հայտնաբերմամբ՝ իրագործվելով մշտական և արժանավոր փոխվստահությամբ:

Հասարակությունը պետք է լինի այն կենտրոնը, ուր պետք է իրականանա անհատի իրավունքները և պարտականությունները, իսկ անհատը պետք է իրականացնի իր գործունեությունը հասարակության միջոցով:

Անհատի մեջ պետք է տեսնել Աստծո պատկերը, իսկ հասարակության մեջ՝ Հիսուս Քրիստոսի եկեղեցու պատկերը: Անհատը պետք է ունենա հնարավորություն, համարձակություն ծառայելու հասարակական գործընթացներում, իսկ հասարակությունը՝ Աստծո կողմից ամեն անհատին տրված շնորհը հնարավորություն է տալիս իրականացնելու, իրագործելու համար: Բայց ընդհանուր վերցրած և՛ անհատի, և՛ հասարակության գործառույթները կայանում են Հիսուս Քրիստոսով առաջնորդվելու մեջ: Միայն այդ դեպքում պետության և իշխանության համար ստեղծված հիմքերը կլինեն արդար և բարեպաշտ:

Իշխանությունը համարվում է արժեքավոր, երբ այն ինքն իրենով համարվում է ծառայություն արդարությանը և ճշմարտությանը: Երբ իշխանությունը չի ծառայում հասարակությանը և իրեն բարձր է դասում ամեն ինչից, այդ ժամանակ այն չի կարող լինել բարոյապես արդարացված: Այդպիսի իշխանությունը պետք է լինի ներդաշնակված և հավասարակշռված քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով:

Ձեռնարկատերերը կարող են և կոչված են կատարելու իրենց քաղաքացիական պարտքը, մասնակից լինել ընտրական գործընթացներին և բարոյապես արդարացված միջոցներով ազդել երկրի և պետության բարօրության համար: Մասնակից լինելով պետության կառավարման համակարգում և քաղաքական գործընթացներում՝ ամեն քրիստոնյա կոչված է իր գործունեությունը կառուցել Ավետարանական պատգամներով՝ արդարության և ողորմածության սկզբունքներով՝ հոգատար լինելով մարդկանց հոգևոր և նյութական բարօրության համար, ինչպես նաև ծառայելով իր հայրենիքին, ազգին և ձգտում ունենալով աշխարհը փոխակերպելու Քրիստոսի խոսքի համաձայն:

Քրիստոնյա ձեռնարկատիրոջ գործունեությունը ներգրավված է հասարակության մեջ: Սա նշանակում է. ովքեր ունեն այլ հավատքի հայացքներ, կամ աթեիստներ են, գործընկերության մեջ նույնպես կարող են ունենալ հավասար իրավունքներ, մասնակից լինել, ինչպես օրինակ՝ համասեփականատերեր, այնպես էլ աշխատակիցներ: Այսպիսի հարաբերությունը սույն անձանց հետ կառուցվում է հավասար պատասխանատվության ճանաչման սկզբունքով, որտեղ բոլորն իրենց արարքների համար պատասխանատու են Աստծո առաջ: Քրիստոնյա ձեռնարկատերը հասկանում է, որ հոգևոր տարբեր աշխարհահայացքային մոտեցումները չեն նշանակում, թե մարդիկ տարբեր կրոնական պատկանելությամբ չեն կարող իրականացնել հավասարապես նման ծրագրեր՝ համամարդակային արժեքների ու համերաշխության շուրջ: Սբ. Հովհան Ոսկեբերանն ասում է «Մենք չունենք որևէ ընդհանուր բան սատանայի հետ, բայց բոլոր մարդկանց հետ մենք ունենք շատ ընդհանրություններ»:

Կրթության համակարգը, գիտությունը և մշակույթը անմիջական գործոններ են ձևավորելու սոցիալ և մշակութային հասարակական միություն և հանդիսանում են անմիջական հետաքրքրությունների շրջանակներում ձեռնարկատերերի համար, ինչպես նաև մասնագիտական հանգամանքներից ելնելով: Քրիստոնեական արժեքներով առաջնորդվող ձեռնարկատերերը նպաստում են հասարակության ձևավորմանը, ինչպես նաև հասարակության ազատության և հավասարության հնարավորությունների սկզբունքների համար ամեն մի անհատի կայացմանը:

Ձեռնարկատիրական հասարակությունը անհրաժեշտաբար պետք է հոգ տանի մարդկանց հոգևոր, մտավոր և ֆիզիկական զարգացմանը: Այսօրվա նյութական և հոգևոր կապիտալը հնարավոր չէ ստեղծել, պահել առանց մտավոր կապիտալի, որը մարդկանց կողմից ներդրվում է իրենց հնարավորությունների, կարողությունների և գիտելիքների միջոցով: Երիտասարդներին պետք է հասանելի լինեն գիտելիքները և մշակույթը, գիտական և ստեղծագործական գործունեությունը: Օգտագործելով մտավոր և նյութական այդ ռեսուրսները հնարավոր է ստեղծել մրցունակ ձեռնարկատիրական գործունեություն: Ինչպես նաև քրիստոնյա ձեռնարկատերը չի աջակցում այն տեխնոլոգիաների ու ստեղծագործական զարգացումներին, որոնք միայն կյանքի ինքնաբավության համար են:

Գործարար միջավայրում արվեստի, ստեղծագործական և նյութական մշակույթի բարոյական ուղեցույցը գործում է, եթե գիտատեխնիկական առաջընթացը, ստեղծագործությունը, արվեստը, նորարարությունը

համապատասխանում են մարդու հոգևոր առաջընթացին և չեն աղճատում բարոյահոգեբանական արժեքները: Իսկ եթե այն հակադրվում է Աստծո կամքին և անմարդկային է, հակակրոնական է, այդ դեպքում վերածվում է հակաստավածային իրողության, այս պարագայում քրիստոնյան ընդդիմանում է:

Մարդիկ, հասարակությունը, պետությունը միայն այն դեպքում կուղղվեն, երբ ամեն անհատ, աչք չզցելով մյուսների վրա, կգբաղվի ինքն իրենով և կապրի որպես քրիստոնյա՝ ծառայելով Աստծուն և մարդկանց այն շնորհներով, որոնք իրեն տրված են և աշխատելով թողնել բարի ու լուսավոր ազդեցություն մարդկանց, շրջապատի վրա: Միայն այս ժամանակ կկարգավորվի մարդկային հարաբերությունները, օրենքը կգործի, օրինապահությունը որպես օրինակ կծառայի:

Սուրբգրային համարներ, որոնք առնչվում են ձեռնարկատիրությանը

Ծննդոց

«Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղաւորեց բերկրութեան դրախտում, որպէսզի սա մշակի ու պահպանի այն»: (Ծն 2:15)

«Իսահակը գարի ցանեց այդ երկրում եւ նոյն տարում էլ հարիւրապատիկ բերք ստացաւ: Տէրն օրհնեց նրան, եւ սա հարստացաւ՝ Նա առաջադիմում էր, հարստանում այն աստիճան, որ մեծահարուստ դարձաւ»: (Ծն 26:12, 13)

Ելք

«Եթէ մէկը մի իր կամ անասուն խնդրի մէկ ուրիշից, եւ դրանք ջարդուեն, սատկեն կամ յափշտակուեն, իսկ տէրը դրանց մօտ ներկայ չլինի, ապա աւանդը վերցնողը թող հատուցի վնասը»: (Ելք 22:14)

«Եթէ արծաթ ես փոխ տալիս աղքատ եղբօրդ, նեղը մի՛ գցիր նրան եւ տոկոսներ մի՛ պահանջիր նրանից: Եթէ գրաւ վերցնես մէկի բաձկոնը, մինչեւ արեւի մայր մտնելը վերադարձրո՛ւ այն, որովհետեւ դա նրա եւ՛ վերարկուն է, եւ՛ նրա մերկութիւնը ծածկող հանդերձը, որով եւ նա քնում է: Եւ եթէ նա բողոքի ինձ, ես կը լսեմ նրան, որովհետեւ ողորմած եմ»: (Ելք 22:22-27)

«Վեց օր կ»աշխատես, իսկ եօթներորդ օրը կը թողնես, որ հանգստանան քո եզն ու էշը, հանգստանան նաեւ քո աղախնու եւ օտարականի որդիները»: (Ելք 23:12)

Ղևտական

«Քո ընկերոջը մի՛ գրկիր իր իրաւունքից եւ նրա ունեցածը մի՛ յափշտակիր: Վարձկանի վարձը մինչեւ յաջորդ առաւօտ թող քեզ մօտ չմնայ»: (Ղև 19:13)

«Եթէ որեւէ մէկը իր մերձաւորին որեւէ բան է վաճառում կամ իր մերձաւորից որեւէ բան է գնում, թող նրան չխաբի»: (Ղև 25:14)

«Եթէ եղբայրդ աղքատանայ եւ ի վիճակի չլինի աշխատելու, նրան պիտի պատսպարես իբրեւ եկուորի ու պանդխտի: Նա քեզ մօտ պիտի մնայ ու ապրի:

Նրանից վաշխ ու տոկոս չպիտի վերցնես՝ վախեցի՛ր քո Տէր Աստծուց, քանզի ես եմ Տէրը: Քո եղբայրը թող քեզ մօտ ապրի: Նրան տոկոսով դրամ չպիտի տաս եւ աւելին ստանալու ակնկալութեամբ չէ, որ նրան պիտի կերակրես»: (ՂԼ 25:35-37)

Երկրորդ Օրենք

«Այնպէս չլինի, որ ուտելուց ու կշտանալուց յետոյ, գեղեցիկ տներ կառուցելուց ու դրանց մէջ բնակուելուց յետոյ, քո արջառն ու ոչխարը բազմանալուց յետոյ, քո արծաթն ու ոսկին շատանալուց յետոյ, քո ունեցած ամէն ինչը բազմանալուց յետոյ, գոռոզամտանաս ու մոռանաս քո Տէր Աստծուն, որը քեզ դուրս բերեց Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից»: (Բ.Օր 8:12-14)

«...այլ յիշի՛ր քո Տէր Աստծուն, որովհետեւ նա է քեզ ուժ տալիս այդ հարստութեան հասնելու համար, որպէսզի հաստատի իր այն ուխտը, որ դրել է քո հայրերի հետ, ինչպէս տեսնում ես այսօր»: (Բ.Օր 8:18)

«Երկինքն ու երկինքների երկինքը, երկիրն ու նրա մէջ գտնուող ամէն ինչ պատկանում են քո Տէր Աստծուն»: (Բ.Օր 10:14)

«Քեզ պատկանող, բայց օտար մարդու փոխ տրուած բանը կը պահանջես, բայց ինչ որ եղբայրդ քեզ պարտք է, այն կը զիջես»: (Բ.Օր 15:3)

«Քո Տէր Աստուածը կօրհնի քեզ, ինչպէս խոստացել է քեզ: Շատ ազգերի փոխ կը տաս, բայց ինքդ պարտք չես վերցնի, բազում ազգերի կը տիրես, բայց քեզ չեն տիրի»: (Բ.Օր 15:6)

«Եւ եթէ քո Տէր Աստծու քեզ տուած երկրի քաղաքներից որեւէ մէկում քո եղբայրների մէջ մէկը կարիքաւոր լինի, ապա նրանից երես մի՛ թեքիր, քո կարիքաւոր եղբոր նկատմամբ ժլատութիւն մի՛ արա, այլ առատածէ՛ռն եղիր նրա նկատմամբ, նրան պարտք տո՛ւր այնքան, որքան կը խնդրի նա իր կարօտութեան մէջ»: (Բ.Օր 15:7,8)

«Տո՛ւր նրան, պա՛րտք տուր նրան այնքան, որքան անհրաժեշտ է: Պարտք տալուց յետոյ մի՛ տրտմիր, որովհետեւ դրա համար քո Տէր Աստուածը քեզ կօրհնի քո բոլոր գործերում՝ ինչի էլ որ ձեռք տաս»: (Բ.Օր 15:10)

«Քո եղբորը վաշխով արծաթ չտաս, կամ շահ ստանալու ակնկալիքով ու տոկոսներով՝ կերակուր»: (Բ.Օր 23:19)

«Եթէ քո մերձաւորը որեւէ բան է պարտք քեզ, ապա գրաւ վերցնելու համար նրա տունը չմտնես. կանգնի՛ր դրսում, եւ պարտք ունեցող մարդը ինքը թող գրաւը հանի դուրս: Եթէ աղքատ է այդ մարդը, ապա երբ դու գիշերը պառկում ես, նրա գրաւ տուած զգեստը թող քեզ մօտ չլինի, այլ արելը մայր մտնելու ժամանակ նրա գրաւը կը վերադարձնես. նա թող պառկի իր զգեստով, օրինի քեզ, եւ դա քո Տէր Աստծու առջեւ կատարուած բարութիւն թող համարուի»: (Բ.Օր 24:10-13)

«Մի՛ գլացիր վարձ տալ քո աղքատ ու կարիքաւոր եղբայրներին կամ քո քաղաքներում գտնուող եկուորներին. նոյն օրը տո՛ւր նրա վարձը, քանի դեռ արելը մայր չի մտել, որովհետեւ նա տնանկ է, եւ դա է նրա յոյսը» Եւ քո մասին թող չբողոքի Տիրոջը, եւ քեզ վրայ դա որպէս մեղք թող չբարդուի»: (Բ.Օր 24:14, 15)

«Երբ քո արտը հնձելուց յետոյ խուրձ մոռանաս քո արտում, մի՛ վերադարձիր այն վերցնելու համար. դա թող պատկանի աղքատին, եկուորին, այրուն ու որբին, որպէսզի քո Տէր Աստուածը քեզ օրինի բոլոր այն գործերում, որոնց ձեռնարկում ես»: (Բ.Օր 24:19)

«Տոպրակիդ մէջ նոյն չափի՝ ծանր ու թեթեւ կշռաքարեր թող չլինեն: Քո տանը նոյն չափսը երկար ու կարճ թող չլինի: Ճշգրիտ ու արդար կշռաքարեր պէտք է ունենաս, ճշգրիտ ու արդար չափ ունենաս, որպէսզի երկար ապրես այն երկրում, որ քո Տէր Աստուածը իբրեւ ժառանգութիւն է տալու քեզ, որովհետեւ քո Տէր Աստծու համար պիղծ է նա, ով վարում է այդ կերպ, ով անարդարութիւն է գործում»: (Բ.Օր 25:13-16)

«Տէրը քեզ համար կը բացի իր բարիքների շտեմարանը՝ երկինքը, որպէսզի ժամանակին անձրեւ տայ քո երկրին, կօրհնի քո ձեռնարկած բոլոր գործերը, փող փոխ կը տաս շատ ազգերի, բայց ինքը նրանցից փոխ չես առնի»: (Բ.Օր 28:12)

«Քո Տէր Աստուածը քո որովայնի ծնունդներով, քո երկրի բերքով ու քո անասունների ծնունդներով յաջողութիւն կը պարգեւի քեզ քո ձեռնարկած բոլոր գործերում: Քո Տէր Աստուածը դարձեալ կ»ուրախանայ քեզ բարութիւն անելով, ինչպէս քո հայրերի համար էր ուրախացել, եթէ լսես քո Տէր Աստծու ասածը՝ պահես ու կատարես այս օրէնքների գրքում գրուած նրա բոլոր պատուիրանները, նրա օրէնքներն ու նրա կանոնները, քո Տէր Աստծուն վերադառնաս քո ամբողջ հոգով ու էութեամբ: Այն պատուիրանները, որոնք այսօր ես պատգամում եմ քեզ, ո՛չ դժուար են, ո՛չ էլ՝ քեզ անմատչելի»: (Բ.Օր 30:9-11)

Հեսու

«Այս օրէնքների գիրքը քո շուրթերից չհեռացնես, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՛ր, որպէսզի գիտենաս կատարել բոլոր դրա մէջ գրուածները. այն ժամանակ յաջողակ կը լինես, ուղիղ ճանապարհով կընթանաս եւ խելամտօրէն կը գործես»:
(Յես 1:8)

Բ Մնացորդաց

«Ամէն մի գործ, որին ձեռնարկեց թէ՛ Տիրոջ տանը ծառայելիս, թէ՛ Տիրոջ օրէնքն ու պատուիրանը կատարելիս, իր ամբողջ սրտով յարեց Աստծուն, կատարեց եւ յաջողութիւն ունեցաւ»:
(Բ.Մն 31:21)

Սաղմոս

«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժոււմ, մեղաւորների ճանապարհին ոտք չի դնոււմ եւ յանցագործների հետ համախոհ չի լինոււմ, այլ հաճոյք է ստանոււմ Տիրոջ օրէնքներից եւ գիշեր-ցերեկ խորհոււմ է Նրա պատուիրանների մասին:

Նա նման է ջրերի հոսանքի վրայ տնկուած ծառի, որն իր պտուղը ժամանակին կը տայ, իսկ նրա տերեւը չի թափուի, ու ամէն բան, ինչ էլ որ անի, կը յաջողուի նրան»:
(Սղ 1:1-3)

«Տէր, ո՞վ պիտի ապրի քո վրանոււմ, կամ ո՞վ պիտի բնակուի քո սուրբ լերան վրայ. նա, ով անբասիր է ընթանոււմ, արդար գործ է կատարոււմ, ճշմարտութիւն խօսոււմ իր սրտոււմ: Ով չի նենգել իր լեզուով եւ ընկերոջը վատութիւն չի արել, մերձաւորներից նախատինքն նա չի ստանոււմ, եւ չարագործն անարգուած է նրա աչքոււմ: Այդպիսին փառաբանոււմ է նրանց, ովքեր երկիւղ ունեն Տիրոջից, երդոււմ է իր բարեկամին եւ երդոււմն իր չի դրժոււմ: Իր արծաթը վաշխով չի տալիս, իրաւունքի դէմ կաշառք չի վերցնոււմ: Ով անոււմ է այս, նա յաւիտեան չի սասանուի»:
(Սղ 14:1-5)

«Մանուկ էի ես եւ ծերացայ, բայց արդարին արհամարհուած չտեսայ կամ նրա զաւակին՝ հաց մուրալիս: Ամէն օր նա ողորմոււմ ու փոխ է տալիս, նրա սերունդը յաւիտեան օրհնեալ կը լինի»:
(Սղ 36:26-27)

«Բարի մարդը ողորմած է եւ փոխ է տալիս, խօսքն իր կատարում արդարութեամբ, որպէսզի յաւետ նա չսասանուի, յաւիտեան մնայ յիշատակն արդարի»: (Սղ 111:5-6)

Առակներ

«Պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից եւ քո արդար բերքից պտո՛ւղ յատկացրու նրան, որպէսզի քո շտեմարանները լցուեն առատ ցորենով, եւ քո հնձաններն աւելի յորդ գինի բխեն»: (Առ 3:9-10)

«Մի՛ յապաղիր կարօտեալին բարութիւն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան: Չասես թէ՛ «Գնա՛, կը գաս՝ վաղը կը տամե, մինչդեռ կարող ես բարութիւնդ անել, քանի որ չգիտես, թէ վաղն ինչ է բերելու քեզ»: (Առ 3:27-28)

«Որդեա՛կ, եթէ բարեկամիդ համար երաշխաւոր լինես, դու քեզ կը մատնես քո թշնամուն. քանզի մարդուս շրթունքները խիստ որոգայթ են իր համար, եւ մարդ բռնուում է իր բերանի խօսքով:

«Արդ, որդեա՛կ, վարուի՛ր այնպէս, ինչպէս պատուիրում են քեզ, եւ դու կապրես, որովհետեւ բարեկամիդ համար չար մարդկանց ձեռքն ընկար: Սրտապնդուի՛ր եւ մի՛ յուսալքուի՛ր եւ նո՛յնը հաղորդիր քո բարեկամին, որի համար երաշխաւոր ես եղել»: (Առ 6:1-3)

«Մրջիւնի մօ՛տ գնա, ո՛վ ծոյլ, նախանձի՛ր նրա գործերին եւ իմաստո՛ւն եղիր նրանից աւելի. քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու եւ ո՛չ էլ գլխին տէր ունի, բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը եւ հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը: Կամ մեղուի մօ՛տ գնա, տե՛ս, թէ ինչպէ՛ս գործունեայ է նա եւ թէ ինչպիսի ջանասիրութեամբ է գործում, որի վաստակը մատուցում են թագաւորներին եւ տնանկներին՝ բժշկութեան համար: Թէպէտեւ թոյլ է ուժով, բայց սիրելի է ու մեծարելի բոլորի համար, որովհետեւ ինքը յարգեց իմաստութիւնը եւ արժանի եղաւ յարգանքի»: (Առ 6:6-8)

«Աղքատութիւնը խեղճացնում է մարդուն, ժրաջան ձեռքերը հարստացնում են նրան»: (Առ 10:4)

«Խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ առջեւ, բայց արդար կշեռքը հաճելի է նրան»: (Առ 11:1)

«Անզգամը չարիք է նիւթում, երբ գործ է ունենում արդարի հետ եւ ասում է զգուշութեան ձայնը»: (Առ 11:15)

«Անիրաւութեամբ դիզուած հարստութիւնը պիտի պակասի, բայց աստուածապաշտութեամբ ձեռք բերուած ունեցուածքը պիտի բազմապատկուի»: (Առ 13:11)

«Իմաստութիւն է, որ մարդ աշխատում եւ մի բան է աւելացնում, բայց անհոգ դատարկապորտը միշտ կարիքի մէջ պիտի լինի»: (Առ 14:23)

«Լաւ է քիչ բաժինը՝ Տիրոջ երկիւղով, քան թէ շատ գանձը՝ առանց երկիւղածութեան»: (Առ 15:16)

«Կշռաքարի արդարութիւնը Տիրոջից է. արդար նժարներ են նրա գործերը»: (Առ 16:11)

«Լաւ է քիչ վերցնել՝ Տիրոջ երկիւղով, քան թէ մեծ գանձեր՝ ամբարշտութեամբ»: (Առ 16:8)

«Չարագործը հնազանդուում է անօրէնի լեզուին, բայց արդարը չի նայում ստախօս շուրթերին: Հաւատարիմ մարդու համար ամբողջ աշխարհը լի է հարստութեամբ, բայց անհաւատարիմը մէկ գրոշ իսկ չունի»: (Առ 17:4)

«Անմիտ մարդը պարում եւ ցնծում է բարեկամների համար երաշխաւոր լինելիս, վնասասէրը ուրախանում է նրանց վէճ ու կռուի ժամանակ»: (Առ 17:18)

«Ծոյլը թէեւ նախատում է, բայց չի ամաչում, ինչպէս մէկը, որ ցորեն է փոխ առնում ամռանը»: (Առ 20:4)

«Կատ է, վատ է, ասում է գնորդը, իսկ հեռանալիս պարծենում է իր գնումով: Կայ ոսկի էլ, հանդերի հարստութիւն էլ, բայց գիտուն շուրթերն են թանկարժէք անօթ»: (Առ 20:14-15)

«Տիրոջ առջեւ պիղծ է երկու տեսակի չափը, եւ խարդախ կշեռքը մերժելի է նրա համար»: (Առ 20:23)

«Կարճ խորհրդածութիւնն էլ կարող է առատութիւն բերել, սակայն ամէն մի հապճեպութիւն կարօտութիւն է բերում: Ով հարստութիւն է կուտակում լեզուի ստութեամբ, նա գնում է սնոտի բաների յետեւից եւ պիտի հասնի մահուան որոգայթների»: (Առ 21:5,6)

«Իմաստունի բերանը ցանկալի գանձ է պահում, բայց տգէտները կուլ են տալիս այն» (Առ 21:20)

«Բարի անունը լաւ է մեծ հարստութիւնից, ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց»: (Առ 22:1)

«Տիրոջ երկիւղն իմաստութեան սկիզբն է. դա է ե՛լ հարստութիւնը, ե՛լ փառքը, ե՛լ կեանքը»: (Առ 22:4)

«Աստուած սիրում է ուրախ եւ առատածեռն մարդուն. աղքատին ողորմութիւն անողն ինքն էլ պիտի կերակրուի, որովհետեւ տնանկին իր հացից է բաժին հանել»
Կաշառք տուողը յաղթութիւն եւ պատիւ է ձեռք բերում, բայց կաշառքը սպանում է առնողների հոգին»: (Առ 22:9)

«Աղքատին զրպարտողը բազմացնում է իր չարիքները. եւ նա, ով զրկում է նրան եւ տալիս է հարստին, կարօտութեան մէջ պիտի մնայ»: (Առ 22:16)

«Որեւէ մէկից ակնածելով՝ պարտքի համար անձո՞ք երաշխաւոր մի՛ դարձրու, որովհետեւ եթէ չունես, որտեղի՞ց պիտի վճարես, եւ ինչո՞ւ առնեն տանեն քո անկողինը, որի վրայ հանգստանում են կողերդ»: (Առ 22:26-27)

«Իր գործի մէջ փութուր եւ խելամիտ մարդուն պէտք է կանգնեցնել թագաւորների եւ ոչ թէ ծոյլ ու անպէտք մարդկանց առջեւ»: (Առ 22:29)

«Տունը շինում է իմաստութեամբ, հաստատում է խելացիութեամբ, եւ շտեմարաններն ամէն տեսակ հարստութեամբ ու բարիքներով լցւում են գիտութեամբ»: (Առ 24:3-4)

«Հո՛գ տար դրսի գործերիդ համար, վերջացրո՛ւ դաստակերտիդ աշխատանքը, ապա ե՛կ իմ յետեւից եւ նորի՛ց շինիր քո տունը: Սուտ վկայ մի՛ լինիր քո ընկերոջ հանդէպ, եւ քո շուրթերով մի՛ խաբիր նրան»: (Առ 24:27-28)

«Խորագէտը տեսնում է գալիք չարիքը եւ խոյս է տալիս, բայց անզգամներն ընդառաջ են գնում եւ տուժում»: (Առ 27:12)

«Խնամքո՛վ վարուիր դաշտի կանաչի հետ, որ խոտ հնձես, դալար խո՛տ հաւաքիր, որ ոչխարների գեղմնաբեր լինեն, եւ դաշտերը լա՛ւ պահիր, որ գառներ ունենաս:

Որդեա՛կ, սովորի՛ր ինձնից այս զօրաւոր պատգամները քո տան ապրուստի եւ քո բարեկամների ապրուստի համար»: (Առ 27:25-27)

«Ճշմարտութեան հետ գնացող աղքատն աւելի լաւ է ստի հետ ընթացող հարստից»: (Առ 28:6)

«Ով մշակում է իր հողը, կը կշտանայ հացով, իսկ ով հետեւում է դատարկ բաների, տնանկ կը մնայ»: (Առ 28:19)

«Չարաչք մարդը շտապում է հարստանալ, բայց չգիտի, որ ողորմած մարդը պիտի յաղթի իրեն»: (Առ 28:22)

«Աղքատներին բաժին տուողը չի աղքատանայ, բայց ով իր աչքը թեքում է նրանցից, նա շատ բանի կարօտ կը մնա»: (Առ 28:27)

Ժողովող

«Մի՛ թոյլ տուր, որ բերանդ մարմնիդ դրդի մեղքեր գործելու, եւ Աստծու առջեւ մի՛ ասա, թէ անգիտութիւնից էր, որպէսզի խօսքիդ համար Աստուած չբարկանայ եւ չաւերի ձեռքիդ գործերը, որովհետեւ, ինչպէս երազների առատութեան, այնպէս էլ խօսքերի շատութեան մէջ եւս ունայնութիւն կայ. եւ դու վախեցի՛ր Աստծուց»: (ժղ 5:5-6)

«Արծաթ սիրողը չի կշտանայ արծաթից, ոչ էլ հարստութիւն սիրողը՝ իր եկամուտներից. ուստի դա եւս ունայնութիւն է»: (ժղ 5:9)

«Աստուած ամէն մարդու հարստութիւն եւ ունեցուածք ու դրանից ուտելու, իր բաժինը վերցնելու եւ իր աշխատանքից ուրախ լինելու իշխանութիւն է տուել Ղա եւս Աստծու պարգէն է»: (ժղ 5:18)

«Բաժին տուր եօթին էլ, ութին էլ, որովհետեւ ի՞նչ իմանաս, թէ ի՞նչ չարիք պիտի լինի երկրի վրայ»: (ժղ 11:2)

Եսայի

«Ձեր արծաթը փորձուած չէ, ձեր վաճառականները գինուն ջուր են խառնում, ձեր իշխաններն ապստամբներ են եւ գողերին գողակից, կաշառք սիրող են եւ վրէժխնդիր, որբերի իրաւունքը չեն պաշտպանում եւ ուշադրութիւն չեն դարձնում այրիների դատին»: (Ես 1:22-23)

Մաղաքիա

«Եւ ձեզ վրայ պիտի գամ դատաստանով ու արագ վկայ պիտի լինեն կախարդների եւ շնացած կանանց դէմ, նաեւ նրանց դէմ, ովքեր սուտ երդում են անում իմ անուամբ, որոնք կտրում են վարձկանի վարձը, որոնք նեղում են այրիներին եւ ծեծում որբերին, որոնք խեղաթիրում են պանդխտի իրաւունքը եւ որոնք չեն վախենում ինձնից, - ասում է Ամենակալ Տէրը»: (Մղ 3:5)

Երեմիա

«Վա՛յ նրան, ով կը կառուցի իր տունը, բայց ոչ արդարութեամբ, եւ իր վերնայարկերը, բայց անիրաւ կերպով□ Նրա մերձաւորը նրա համար ձրի գործ կ»անի, բայց նրա վարձը նա չի հատուցի նրան»: (Եր 22:13)

«Բայց թող օրհնեալ լինի այն մարդը, որ յոյսը Տիրոջ վրայ կը դնի, որ Տէրը նրա յոյսը կը դառնայ»: (Եր 17:7)

Եզեկիել

«Մի՞թէ դու աւելի իմաստուն ես, քան Դանիէլը, կամ մի՞թէ իմաստուններ են քեզ խրատել իրենց հանճարով: Մի՞թէ քո իմաստութեամբ կամ խելքով ես քեզ համար հարստութիւն դիզել եւ իբրեւ գանձ ստացել ոսկի ու արծաթ: Կամ քո իմաստութեան եւ առեւտրիդ շատութեա՞մբ ես մեծացրել հարստութիւնդ, ու սիրտդ քո հարստութեա՞մբ է փառաւորուել»: (Եզ 28:3-5)

Մատթեոս

«Այլ ձեր խօսքը լինի՝ այոն՝ այո, եւ ոչը՝ ոչ. որովհետեւ դրանից աւելին չարից է»: (Մտ 5:37)

«Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. եւ ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից»: (Մտ 5:42)

«Այլ երբ դու ողորմութիւն անես, թող քո ձախ ձեռքը չիմանայ, թէ ինչ է անում քո աջը, որպէսզի քո ողորմութիւնը ծածուկ լինի, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի քեզ յայտնապէս»: (Մտ 6:3-4)

«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մէկին կատի եւ միւսին կը սիրի, կա՛մ մէկին կը մեծարի եւ միւսին կարհամարհի. չէք կարող ծառայել Աստծուն եւ՝ մամոնային: Դրա համար ասում են ձեզ. ձեր կեանքի համար հոգ մի՛ արէք, թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք, եւ ոչ էլ ձեր մարմնի համար, թէ ի՛նչ պիտի հագնէք. չէ՞ որ կեանքը աւելին է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան զգեստը: Նայեցէ՛ք երկնքի թռչուններին. ո՛չ վարում են, ո՛չ հնձում եւ ո՛չ էլ շտեմարանների մէջ հաւաքում. եւ ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նրանց. չէ՞ որ դուք աւելին էք, քան նրանք:» (Մտ 6:25-27)

«Այսուհետեւ հոգ մի՛ արէք վաղուայ մասին, որովհետեւ վաղուայ օրը իր մասին կը հոգայ. օրուայ հոգսը բաւ է օրուայ համար»: (Մտ 6:35)

«Արդ, եթէ դուք, որ չար էք, գիտէք ձեր որդիներին բարի պարգեւներ տալ, որքա՛ն եւս առաւել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կը տայ նրանց, որ նրանից ուզում են»: (Մտ 7:11)

«Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացէ՛ք, տուէ՛ք կայսրինը՝ կայսեր եւ Աստծունը՝ Աստծուն»: (Մտ 22:21)

Մարկոս

«Իսկ նրանք, որ սերմանուեցին փշերի մէջ, այն մարդիկ են, որ լսում են խօսքը, սակայն այս աշխարհի հոգսերը եւ հարստութեան պատրանքները ներխուժում եւ խեղդում են խօսքը, եւ այն անպտուղ է լինում»: (Մր 4:18-19)

«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի. որովհետեւ մարդ ի՞նչ ունի տալու իր անձի փոխարէն»: (Մր 8:36-37)

«Յիսուս կանգնած էր գանձանակի դիմաց. դիտում էր, թէ ինչպէս ժողովուրդը պղինձ դրամ է գցում գանձանակի մէջ: Եւ շատ մեծահարուստներ շատ բան գցեցին: Մի այրի կին եկաւ եւ երկու լումայ գցեց, որ մի գրոշ է: Եւ Յիսուս իր մօտ կանչելով իր աշակերտներին՝ նրանց ասաց. «Ճշմարիտ են ասում ձեզ, որ այդ չքաւոր այրին աւելի շատ գցեց, քան գանձանակի մէջ միւս բոլոր դրամ գցողները, քանի որ ամէնքը իրենց աւելորդից գցեցին, իսկ նա, իր չքաւորութիւնից, գցեց ամէն ինչ, որ ունէր՝ իր ամբողջ ապրուստը»: (Մր 12:41-44)

Ղուկաս

«Մաքսաւորներն էլ եկան մկրտուելու եւ հարցրին նրան. «Վարդապե՛տ, մե՛նք ինչ անենք»: Նա ասաց նրանց. «Ձեզ հրամայուածներից աւելին մի՛ վերցրէք»:

Չինուորները նոյնպէս հարցնում էին նրան. «Իսկ մե՛նք ինչ անենք»: Նա ասաց նրանց. «Ոչ ոքի մի՛ նեղէք, ոչ ոքի մի՛ զրպարտէք, ձեր ռոճիկը թող ձեզ բաւարար լինի»: (Ղկ 3:10-12)

«Բայց դուք սիրեցէ՛ք ձեր թշնամիներին եւ բարութի՛ւն արէք ձեզ ատողներին ու փո՛խ տուէք նրան, ումից յետ առնելու ակնկալութիւն չունէք: Եւ ձեր վարձը շատ

կը լինի, եւ դուք Բարձրեալի որդիները կը լինէք, որովհետեւ նա բարեհաճ է չարերի եւ ապերախտների հանդէպ»: (ՂԿ 6:38)

«Նոյնիսկ ձեր գլխի բոլոր մազերը հաշուուած են. մի՛ վախեցէք, որովհետեւ դուք շատ աւելի յարգի էք, քան ճնճղուկները»: (ՂԿ 12:7)

«Ձեզնից ո՞վ, եթէ կամենայ աշտարակ շինել, նախ նստելով չի հաշուի իր ծախսերը, թէ աւարտելու համար բաւական դրամ ունի՞, որպէսզի, գուցէ, երբ հիմը դնի եւ չկարողանայ աւարտել, բոլոր նրանք, որ տեսնեն, չսկսեն նրան ծաղրել եւ ասել, թէ՝ «Այս մարդը սկսեց կառուցել եւ չկարողացաւ աւարտել»»: (ՂԿ 14:28-30)

«Քիչ բանի մէջ հաւատարիմը շատի մէջ էլ հաւատարիմ է. իսկ քչի մէջ անիրաւը, շատի մէջ էլ անիրաւ է: Արդ, եթէ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կը վստահի ճշմարիտը: Եւ եթէ օտարինը եղող բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ կը տայ ձեզ: Ոչ մի ծառայ երկու տիրոջ ծառայել չի կարող. որովհետեւ, եթէ մէկին ասի, միւսին կը սիրի. կամ եթէ մէկին մեծարի, միւսին էլ կ»արհամարհի: Չէք կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ մամոնային»»: (ՂԿ 16:10-13)

Հովհաննես

«Նրանց ասաց. «Ուռկանը զցեցէ՛ք նաւակի աջ կողմը եւ կը գտնէք: Գցեցին. եւ ձկների բազմութիւնից չէին կարողանում այն դուրս քաշել»»: (ՅԻ 21:6)

Գործք Առաքելոց

«Ես իմ օրինակով ամէն ինչ ձեզ ցոյց տուեցի, որովհետեւ այդպէս պէտք է աշխատել եւ դարմանել հիւանդներին ու յիշել Տէր Յիսուսի խօսքը, որ ինքն իսկ ասաց. «Երանելի՛ է մանաւանդ տալը, քան առնելը»»: (ԳՐԾ. 20:35)

Հռոմեացիներին

«Եթէ յորդորում է՝ թող յորդորի. ով առատաձեռն է՝ թող անի զուարթութեամբ. ով վերակացու է՝ փութաջանութեամբ. ով ողորմում է՝ խնդութեամբ»»: (ՀՐ 12:8)

«Արդ, հատուցեցէ՛ք իւրաքանչիւրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկիւղ՝ երկիւղը, որին պատիւ՝ պատիւը»:

«Եւ ոչ ոքի պարտապան մի՛ մնացէք, բացի միմեանց սիրելուց, քանի որ, ով սիրում է ընկերոջը, կատարում է օրէնքը»»: (ՀՐ 13:7-8)

«Եթէ ապրում ենք, Տիրոջ համար ենք ապրում. եւ եթէ մեռնում ենք, Տիրոջ համար ենք մեռնում: Եւ արդ, ապրենք թէ մեռնենք, Տիրոջն ենք»: (Հռ 14:8)

Ա Կորնթացիներին

«Չէ՞ որ մեզ համար է ասում. քանի որ մեզ համար գրուեց այդ. ով վարուցանք է անում, պէտք է յոյսով վարուցանք անի, եւ ով կալսում է՝ վայելելու յոյսով»: (Ա Կր 9:10)

«Արդ, ուտէք թէ խմէք, կամ ինչ էլ անէք, ամէն ինչ արէ՛ք Աստծու փառքի համար»: (Ա Կր 10:31)

Բ Կորնթացիներին

«քանզի, ով որ մի բան սերմանում է խնայելով, խնայողութեամբ էլ կը հնծի. եւ ով առատաձեռնօրէն է սերմանում, առատութեամբ էլ կը հնծի: Իւրաքանչիւրը թող տայ, ինչպէս յօժար է սրտով եւ ոչ թէ հարկադրաբար եւ տրտմութեամբ. որովհետեւ Աստուած սիրում է զուարթառատ տուրքը: Եւ Աստուած կարող է ամէն շնորհ շատացնել ձեր մէջ, որպէսզի ամէն ինչում ամենայն ժամ ամենայն բաւականութիւն ստանալով՝ առատանաք բոլոր բարի գործերում, ինչպէս գրուած էլ է. Եւ Աստուած, որ սերմ է պարգեւում սերմնացաններին եւ ուտելու հաց, պիտի պարգեւի եւ պիտի բազմացնի նաեւ ձեր սերմնացուն եւ պիտի աճեցնի ձեր արդարութեան պտուղները»: (Բ.Կր 9:6-10)

Եփեսացիս

«Նրանով է, որ ժառանգեցինք մեզ վիճակուած բաժինը, ըստ առաջադրութեան Աստծու, որ ամէն ինչ յաջողեցնում է իր կամքի խորհուրդների համաձայն» (Եփ 1:11)

«Ծառանէ՛ր, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին ահով եւ դողով եւ անկեղծ սրտով, ինչպէս հնազանդ էք Քրիստոսին. ո՛չ թէ հսկողութեան տակ ծառայելով, որպէս մարդահաճոյ անձեր, այլ՝ որպէս Քրիստոսի ծառաներ՝ կատարելու համար Աստծու կամքը: Յօժարութեամբ ծառայեցէք, ինչպէս պիտի ծառայէիք Տիրոջը եւ ոչ թէ՝ մարդկանց: Իմացէ՛ք, որ իւրաքանչիւր ոք՝ թէ՛ ծառայ եւ թէ՛ ազատ, ինչ բարի բան որ անի, նոյնն էլ կը ստանայ Տիրոջից»: (Եփ 6:5-8)

«Եւ դուք, տէրե՛ր, նո՛յնն արե՛ք նրանց հանդէպ՝ մի կողմ թողնելով սպառնալիքները. իմացե՛ք, որ ե՛ւ նրանք, ե՛ւ դուք Տէր ունէ՛ք երկնքում, եւ նրա առաջ աչառութիւն չկայ»: (Եփ 6:9)

Փիլիպեցիս

«Հոգ մի՛ արե՛ք, այլ աղօթքներով եւ աղաչանքներով ձեր խնդրանքները գոհաբանութեամբ յայտնի թող լինեն Աստծուն»: (Փլպ 4:6)

«Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատութեան մէջ լինել: Ամէն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թէ՛ կուշտ լինել, թէ՛ քաղցած մնալ, թէ՛ առատութեան մէջ լինել, թէ՛ զրկանք կրել: Ամէն ինչի կարող եմ նրա՛ շնորհիւ, ով ինձ զօրացրեց»: (Փլպ 4:12-13)

«Եւ իմ Աստուածը կը լցնի ձեր կարիքները իր հարստութեան չափով, փառքով, Քրիստոս Յիսուսի միջոցով»: (Փլպ 4:19)

Կողոսացիս

«Ինչ որ անէք, արե՛ք սրտանց, որպէս թէ Տիրոջ համար էք անում եւ ոչ թէ՛ մարդկանց համար»: (Կղ 3:23)

«Մի՛ ստէք միմեանց. հանեցե՛ք ձեր վրայից հին մարդուն իր գործերով եւ հագե՛ք նորը, այն, որ նորոգուած է գիտութեամբ, ըստ իր Արարչի պատկերի»: (Կղ 3:9-10)

«Եւ ինչ որ անէք խօսքով եւ գործով, բոլորն արե՛ք Տէր Յիսուսի անունով. գոհութի՛ւն մատուցեցէ՛ք նրանով Աստծուն եւ Հօրը»: (Կղ 3:17)

«Տէրե՛ր, ծառաների հետ վարուեցե՛ք ուղղամտութեամբ եւ արդարութեամբ. իմացե՛ք, որ դուք էլ Տէր ունէ՛ք երկնքում»: (Կղ 4:1)

Ա Թեսաղոնիկեցիներին

«Ապրէք խաղաղ եւ իւրաքանչիւրդ ձեր գործով զբաղուէք ու աշխատէք ձեր ձեռքերով, ինչպէս որ պատուիրել ենք ձեզ, որպէսզի պարկեշտութեամբ վարուէք դրսեցիների հետ եւ ոչ մի բանի կարօտ չլինէք»: (Ա Թս 4:11)

Բ Թեսաղոնիկեցիներին

«քանի դեռ ձեզ մօտ էինք, այս բանն էինք պատուիրում ձեզ. թե՛ ով չի ուզում աշխատել, թող հաց էլ չուտի»: **(Բ.Թս 3:10)**

Ա Տիմոթեոսին

«Իսկ եթե մէկը իւրայիններին եւ մանաւանդ ընտանիքին խնամք չի տանում, հաւատն ուրացել է եւ աւելի չար է, քան անհաւատը»: **(Ա Տմ 5:8)**

«քանզի Սուրբ Գիրքն ասում է. «Կալ անող եզան դունչը մի՛ կապիրե եւ՝ «Մշակն արժանի է իր վարձին»: **(Ա.Տմ 5:18)**

«...որովհետեւ ոչինչ չբերեցինք աշխարհի, ոչ էլ պիտի կարողանանք տանել»: **(Ա.Տմ 6:8)**

«Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձութեան, որոգայթի եւ բազում անմիտ ու վնասակար ցանկութիւնների մէջ, որոնք ընկղմում-տանում են մարդկանց դէպի կործանում եւ դէպի կորուստ, որովհետեւ բոլոր չարիքների արմատը փողասիրութիւնն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորուեցին հաւատից եւ իրենք իրենց զցեցին բազում ցաւերի մէջ»: **(Ա Տմ 6:10-11)**

«Այս աշխարհի հարուստներին պատուիրի՛ր, որ չհպարտանան եւ չապաւինեն սնտի հարստութեանը, այլ՝ Աստծուն, որ մեզ առատապէս ամէն ինչ տալիս է վայելելու համար. պատուիրի՛ր բարիք գործել, բարի գործերով հարստանալ, լինել առատաձեռն, բարեսէր, իրենց ունեցածից ուրիշին էլ բաժին հանել՝ իրենց համար բարի հիմք դնելով հանդերձեալում, որպէսզի ձեռք բերեն ճշմարիտ կեանքը»: **(Ա.Տմ 6:18-20)**

Եբրայեցիներին

«Անարդար չէ Աստուած, որ մոռանայ ձեր գործերը եւ սէրը, որ ցոյց տուեցիք իր անունով, քանի որ ծառայում էիք սրբերին եւ ծառայում էք մինչեւ այժմ»: **(Եբր 6:10)**

«Փողասիրութիւնը թող տեղ չունենայ ձեր մէջ, եւ ինչ որ ձեռք էք բերել, բաւարար համարեցէք, քանզի ինքն իսկ ասաց. «Քեզ չպիտի թողնեն եւ ոչ էլ պիտի լքեն»: **(Եբր 13:5)**

Հակոբոս

«Այդ որտեղի՞ց պատերազմներ եւ որտեղի՞ց կռիւներ ձեր մէջ. չէ՞ որ ձեր այն ցանկութիւններից, որոնք կռիւ են մղում ձեր անդամների մէջ:

Ցանկանում էք, բայց չունէք, ուստի եւ՝ սպանում էք, նախանձում եւ չէք կարողանում ձեռք բերել ձեր ուզածը. պայքարում էք, կռում եւ ձեռք չէք բերում, որովհետեւ չէք խնդրում:

Խնդրում էք եւ չէք ստանում, որովհետեւ չարամտօրէն էք խնդրում, որպէսզի այն ծառայեցնէք ձեր ցանկութիւններին»: (Յկ 4:1-3)

«Ուրեմն այժմ, հարուստներ, լացէ՛ք եւ ողբացէ՛ք այն թշուառութիւնների համար, որ գալու են ձեր գլխին. որովհետեւ ձեր հարստութիւնը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, եւ ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած. եւ նրանց ժանգը ձեր դէմ որպէս վկայութիւն պիտի լինի եւ պիտի ուտի ձեր մարմինը՝ ինչպէս կրակը. վերջին օրերի՛ համար գանձեր դիզեցէք: Ահա՛ւասիկ, ձեր դաշտերը մշակած մշակների վարձը ձեզ մօտ պահեցիք. ձեր կողմից գրկուածն աղաղակում է, եւ հնձուորների բողոքը հասաւ Ամենակալ Տիրոջ ականջին: Մեղկ կեանքով ապրեցիք երկրի վրայ եւ շուայտացաք ու ձեր սրտերը պարարտացրիք մորթուելու օրուայ համար: Զրկեցիք, սպանեցիք արդարին, որը ձեզ չէր հակառակում»: (Յկ 5:1-6)

Ա Պետրոս

«Ձեր բոլոր հոգսերը նրա վրայ զգեցէ՛ք, որովհետեւ նա է, որ հոգում է ձեր մասին»: (Ա Պտ 5:7)